# ՕՐԱԳՐՔ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԶԳԱՑԻՆ ԼՈՒՍԱԻՈՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ

# 1862

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԵԳՆԱՑՔ.

*ԱՄՍԱԹԻՎ 11.*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.


| | Եր. |
|---|---|
| ՄԱՐԳԱՐԷ ԿՆՈՋ ԱՆԷՆԴԸ. (Վերջ.) Ս. Նազարեանց. . . . . | 201 — 231 |
| ԹԷ ԻՆՉՊԷՍ Է ՑԱՒԱԶԱՆԴՈՒԹԻՒՆԸ ԿԱԹՈԼԻԿԵԱՆ ՐԵՓՕՐՄԻ ԻՏԱԼԻԱՑԻ ՄԷՋ. Թարգ. Փրանսիականէ. (Վերջ.) Ս. Նազարեանց. | 232 — 242 |
| ԹԷ ԻՆՉ ՐԱՆ ԾԱՆՐ ԷՐ ՈՒՍԱՆՈՒՄ ՄԱՐԴՍ. Ս. Նազարեանց . . | 243 — 248 |



ՓԱՐԻԶ,

ВЪ ТИПОГРАФІИ ЛАЗАРЕВСКАГО ИНСТИТУТА ВОСТОЧНЫХЪ ЯЗЫКОВЪ.

1862.



ՆՈՅԵՄԲԵՐ 1862 ԹՈՒԱԿԱՆԻ.

# ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.

## ՄԱՐԳԱՐԻՏ ԳՏՈՂ ԱՆԷԾՔԸ.

(Շարունակութիւն և վերջ.)

ՅՕԳՈՒՆԱԾ ՈՒԹԵՐՈՐԴ.

### ՍՐՏԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ.

Վաւրիերեան գերդաստանի մէջ, մի փոքր ժամանակից յառաջացել էր մի կատարեալ երկպառակութիւն: Լուդովիկոսը վերաւորուած էր իւր սրտի մէջ, ըստ որում Մարգարիտը ինչպէս յառաջ, նոյնպէս այժմ ընդդիմանում էր նորա ամուսնութեանը Օրմնեզեան Փելիսիտէի հետ, և պարոն Քուրրիերը, որոյ սիրտը Մարգարիտի ապացուցութեամբ վկայուէր Մարկիզի յանցանքը, չկամէր առանց նորա քուրը ձայնակցութեան տալ նորան իւր հաւանութիւնը: Եղէկ ինքը Մարգարիտը պատրաստ էր հրաժարուիլ իւր սիրուց դէպ ի երիտասարդ Օրմնեզը, յարգելով իւր հօր յիշատակը, ապա համարձակ էր նորան նոյն բանը պահանջել իւր պատանի եղբօրից: Այս թշուառ հանգամանքի պատճառով վախչումին միմեանցից այդ երկու անձինքը, թէպէտ նորա քնքուշ սիրով անձնատուէր էին միմեանց: Լուդովիկոս թափառումէր գաշտերի և անապատների մէջ, և գանգատումէր իւր

սրտի ցաւը անտառի ծառերին և նորա վերայ կամար կապած երկնքին։ Ա-
լևոր պարոնը փակուած էր իւր մատենադարանի մէջ և անցուդարձումէր իւր
ժամանակը ուսումնասիրելով իւր հայրենիքի պատմութիւնը։ Մարգարիտը
շրջումէր միայնութեամբ ագարակի ծառաստանի մէջ, կամ թէ լինումէր այն
մատուռում, ուր ամփոփուած էին իւր ծնողների հողեղէն նշխարքը։ Նոցա
գերեզմանի մօտ պաղատումէր դէպ ի երկինք, ուղարկելու իւրեան լոյս այն
խաւարի մէջ որ այժմ շրջապատել էր իւր հոգին։ Նա երդուել էր, իւր հօր
վրէժը առնուլ։ Նա երկար ու ձիգ տարիներ չանադիր էր եղել լցուցանել
վրէժը, և այժմ, երբ նա, կերպարանուած իբրև գուշակող կին, իւր մա-
հուշտի թշնամու սրտի մէջ բորբոքել էր դժոխքի բոցը, երբ նա դէպ ի գե-
տին էր կործանել նորան որպէս մի կայծակ ամպերի միջից կործանումէ հպարտ
կաղնին — այժմ նորա սիրտը լցուել էր անվճռելի երկբայութեամբք։ Ար-
դեօք դեռ ևս հաճոյ էր Աստուծուն իւր վրէժխնդրութիւնը. արդեօք յաւի-
տեան ողբմածը չկամէր յառաջացնել մի հաշտութիւն, ըստ որում նորա
առաջնորդող ձեռը Մարկիզի զաւակների սիրտը վառել էր սիրով դէպ ի
ինքը և դէպ ի իւր եղբայրը։ Ի՜նչ մեղք ուէին այդ անբաղդները, որ նոցա
հայրը մի ժամանակ բարձել էր իւր վերայ այդպիսի պարտիք։ Մի թէ ար-
ժան էր, որ դոքա ևս անբաղդանային և պարտականք ու անպարտք պատիժ
կրէին միանդամայն։

Ըհա, այսպիսի խորհրդածութիւններ անհանգիստ տարուբերումէին
այն անբաղդ աղջիկը և լցուցանումէին նորա սիրտը մի անկեղծ փափագով
դէպ ի հաշտութեան մեծ պատճառը, Մահը, որ գիտէ բժշկել այո և ամե-
նամեծ ցաւերը։

Մի այսպիսի ժամում, երբ նորա սիրտը գտանվումէր մի ահարկու
տիպանքի, մի պատերազմի մէջ, տարուբերուելով իւր սիրոյ և իւր վրէժ-
խնդրութեան մէջ տեղում, ներս մտաւ նա մի օր մատուռը։

Ահա վայր ընկաւ գերեզմանաքարի մօտ և պաղատումէր սրտի խորքից.

Ով իմ Տէր և Աստուած, ողբմած եղիր։ Օգնիր ինձ այս ահաւոր
պատերազմի մէջ։ Եթէ այն, ինչ որ ես արել եմ, մեղք է, ապա թող քո
հրեշտակներից մինը մօտենայ ինձ որպէս քո կամքի ազդարար։ Ոչ, զար-
հուրանք ու խառնակութիւն թագաւորում իմ հոգուս մէջ։ Միայն քո շնոր-
հի աստուածեղէն ճառագայթը կարող է լուսաւորել նորան։

Վրէժը մարմարիոնի աստիճանների վերայ ղրած, աղօթումէր նա
մեղմագին և ջերմեռանդութեամբ։

Ահա կամաց ու մեղմութեամբ բացուեցաւ մատուռի դուռը։

Աղօթող կինը չնկատեց այս։

Մի մանուկ աղջիկ, այնպէս սիրելի, ինչպէս ամենագեղեցիկ ծաղիկը այն
պսակի որով այսօր Մարգարիտը զարդարել էր տրտմութեան յիշատակարանը,
կանգնած էր մուտքումը և ձգումէր ամօթխած հայեացք մատուռի ներսը։

Դա էր Ֆելիսիտե Օրմծնդեանը, որ այս տեղ որոնումեր Մարգարիտին։ Պարոն Քուրբիերը ուղարկել էր նորան այս տեղ։ Ֆելիսիտէն տեսա-նելով Մարգարիտին գերեզմանի մօտ, կանգց մնտեցաւ նորան։

«Ահա այն տեղ է», շշնջեց Ֆելիսիտէն քթի տակ. «Նա աղօթումէ։ Ո՛վ, դա շատ յարգող րոպէ է իմ դիտաւորութեանս համար»։

Միայն սակաւ քայլափոխք Քուրբիերեան օրիորդից հեռի, մեաց Մարգարիտը կանգնած, չունչը պահելով։ Նա կամէր սպասել, մինչև սա ա-ւարտէր իւր երկիւղած աղօթքը։

Վերջապէս տեղից բարձրացաւ Մարգարիտը զօրացած հոգով և շրջեց երեսը դէպ ի այն կողմը։

Մի մեղմ զարմացական բացագանչութիւն դուրս եկաւ նորա շրթուն-քից, երբ որ նա նկատեց ամենևին անծանօթ աղջիկը։ Սակայն նորա քաղցր տեսութիւնը մի ախորժելի տպաւորութիւն ազդեց Մարգարիտի վերայ։ Նա երկար ժամանակ ղննեց Ֆելիսիտէի կերպարանքը, առանց բերանից մի բառ հանելու. բայց նորա սրտի մէջ խօսումէր մի այսպիսի ձայն.

«Երկնային տեսչութիւնը արդէն լսել է քո խնդիրքը և ցած է ուղար-կել քեզ իւր հրեշտակներից մինը»։

Մարգարիտը տակաւին լուռ մնալով, Ֆելիսիտէն համարձակուեցաւ խօսքը վեր կալնուլ։

«Ներեցէք ինձ», ասաց նա նկատելի ահաբեկութեամբ. «Ես այս տեղ ո-րոնումեմ օրիորդ Քուրբիերը»։

«Ահա կանգնած է Ձեր առաջև», պատասխանեց Մարգարիտը հե-զութեամբ։

Ֆելիսիտէն քաջալերուելով նորա ձայնից, նայեց նորա վերայ մի փոքր աւելի համարձակութեամբ։

«Դո՞ւք — Դո՞ւք եք օրիորդ Քուրբիերը»։

«Ես մի թէ արժան չէր ինձ լինել այդ անձը»։

Մանուկ աղջիկը ժպտեցաւ մեղմութեամբ։

«Ներեցէք, ես հաղիւ կարող էի հաւատալ. պատճառ ես նկարա-գրումէի մեքով այդ օրիորդը կոշտ և խիստ։ Ինչպէս երջանիկ եմ, որ այդ այդպէս չէ։ Ձեր աչքը նայումէ տրտում, բայց հեզ. Ձեր ձայնը հնչումէ աղէտալից, բայց կակուղ և մեղմ։ Ես կամէի բարևանալ ինքս իմ վերայ, որ ես պլապէս եմ պատկերացրել Ձեզ»։

«Կարո՞ղ եմ հարցանել թէ ո՛վ էր մանուկ տիկինը, որ մեծարումէր ինձ իւր այցելութեան պատուով», ասաց Մարգարիտը։

Ֆելիսիտէն շարժեց իւր մեղերի օղերը որ ազատ թափվումէին նորա ուսերի վերայ։

Ո՜հ, մի խօսէք այցելութեան պատուի վերայ։ Ես մի անբաղդ աղ-

*Հակ եմ և իմ սիրտս լի է վշտով։ Ես եկել եմ այս տեղ, ձեր կարեկցութիւնը, ձեր դթութիւնը աղերսելու։*

Արքարիտին այնպէս թուեցաւ, որպէս թէ նա այս վարուկ, դժաշարժ ձայնը լսել էր մի այլ բերանից։ Նա ուղղեց մի զննողական աչք այն քաղցր երեսի վերայ և ապա ձայն արձակեց իսկոյն.

«Այս գծագրութիւնքը դէմքի, այս ձայնը։ Եթէ չեմ սխալւում, ապա դա է Օրիորդը Օրմօնդ, որ կանգնած է իմ առաջև»։

«Այո, նա ինքն է», շշնջեց Ֆելիսիտէն։

Արքարիտը շտապով դարձուց նորանից երեսը։

Անուկ աղջիկը ամենևին մօտեցաւ նորան։

«Ձեզ պիտոյ չէ ձեր երեսը դարձուցանել ինձանից», խնդրեց նա. «ապա թէ ոչ, ես կորուսանելու էի վստահութիւնս—բայց ես ունիմ ասելու Ձեզ այնքան շատ բան»։

«Դուք—ինձ». խօսեց քթի տակ Արքարիտը։

«Այո՛», ասաց Ֆելիսիտէն. «Ես կամէի ձեղանից ջերմութեամբ և առ ի սրտէ խնդրել, ծնկերի վերայ չոքած խնդրել, որ դուք բաղդատութիւնք չորս բարի մարդկի։ Ինձ ասել են, որ դուք չկամիք ոչ մեր և ոչ ձեր յատուկ բաղդատութիւնը, բայց դորա պատճառը ծածկել են ինձանից, և ես կարող չեմ դորան գուշակել։ Խնդրեմ, Արքարիտ, բացայայտեցէք ինձ այս գաղտնիքը։

Նա ծունր էր խոնարհեցուցել շատ մօտ գուրբիեր օրիորդի առաջև, կցել էր ձեռքը և մեծարանքով վեր էր նայում դէպ ի նա։

Արքարիտի սիրտը շարժուեցաւ։

«Այս դժաշարժ ձայնը, մնացուկներ նա, այս հոգելից աչքերը աղերսումեն մի երևելի սուրբ անմեղութեամբ։ Իմ եղբայրս շատ չէ ասել ինձ։

Ֆելիսիտէն յառաջ ասրաւ խօսքը.

«Ադամէք դուք։ Դուք ասում չէք. վէր կացիր, սիրելի քոյր»։

«Վէր կացէք, Օրիորդ Օրմօնդ», ասաց Արքարիտը։

«Ո՛չ, դա բաւական չէ ինձ», ձայն տուեց շուռտով մնանուկ աղջիկը։ «Դուք պիտի ասէք—սիրելի քոյր։ Ո՛չ, ես երբէք ունեցած չեմ մի քոյր և այնու ամենայնիւ յաճախ փափագած եմ դորան։ Եղիք իմ քոյրս, Դուք երբէք ապաշաւելու չէք դորա վերայ»։

Արքարիտը ըմբռնեց նորա ձեռքը և բարձրացրեց նորան գետնից, ասելով.

«Այս կացութիւնը անարժան է Արկիլ Օրմօնդի աղջկան»։

«Ո՛չ, դա ոչինչ պատասխան չէ», ասաց Ֆելիսիտէն տրտմած։ Արդեօք պիտոյ չէր ինձ գտնէ իմանալ պատճառը, թէ ընդէր Լուդովիկոսը կարող չէր վեսայանալ ինձ։ Թէ ընդէր մերժումէք դուք իմ եղբայրը, որ այնպէս խորին և մեծերիմ սիրով անձնանուէր է Ձեզ։

Մարգարիտը ցած էր նայում իւր առաջև։

«Լիդպէս է Աստուծոյ կամքը», ասաց նա աղօտ ձայնով։ «Ես կարող չեմ փոփոխել այդ»։

Ֆելիսիտէն շուտով ըմբռնեց նորա ձեռը։

«Աստուծոյ կամքը. երբէք։ Ինչո՞ւ ապա Թոյլ էր տուել նա հանդիպել Ձեզ իմ եղբօրը, և ինձ Լուդովիկոսին։ Ո՛հ, արդէն առաջին անգամը, երբ որ ես տեսայ նորան, և նա հայեացք ու խօսք ուղղեց դէպ ի ինձ, մի ձայն խօսեց իմ մէջ պարզ ու յայտնի. Դորան ուղարկում քեզ բարի Աստուածը։ Անտարակոյս, նոյնպէս խօսել է Ձեր մէջ ձեր սիրտը, երբ որ հանդիպել էիք իմ եղբայր Դուստաֆին»։

Հաղցր, գթաշարժ ձայնը, որով նա ասում էր այս խօսքերը, հնչել լայց և այնպէս ճարտարախօս կենդանութիւնը նորա հրեշտականման երեսի, այնպէս յափշտակեցին Մարգարիտի միտքը, որ նա պարզեց ձեռները, զրկախառնելու իւր բարեկամի ծոցը։ Բայց գարձեալ յաղթեց նա իւր անձին։ Նորա բազուկները թուլացան և նա պատասխանեց տրտում.

«Ո՛վ քաղցր, սիրարժան աղջիկ։ Ինձ համարձակ չէ ասել Ձեզ «այո»։ Ես պիտի փախչիմ այդ քաղցր հրապուրանքից»։

Մարգարիտի խոովութիւնը քաջալերել էր վախկոտ աղջիկը։

«Երէք, ինչ որ կամիք», ձայն արձակեց նա, «բոլորը անօգուտ է։ Ես կ'ասեմ Ձեզ ծածուկ և այնքան յաճախ կրկնելու եմ այդ խօսքը, մինչև Դուք ես տալիք ինձ այդ սիրելի անունը։ Սէրը ծնուցանում սէր։ Ես եկայ այս տեղ ստանալու Ձերը և չեմ դնալու այս տեղից դատարկաձեռն»։

«Ֆելիսիտէ», ձայն տուեց Մարգարիտը. «Դուք պատասխանում իմ սիրտս»։

Նա կրկին դարձուց երեսը, իւր արտասուքը թաքուցանելու համար։

«Ո՛հ, գութ է ընկել ձեր սիրտը», ասաց մանուկ աղջիկը։ «Ահա—ահա—փայլում Ձեր աչքում մի արտասուք։ Կարո՞ղ եմ այդ արտասուքը սրբել համբուրելով, սիրելի քոյր իմ»։

Նա շտապով մօտեցաւ Մարգարիտին և գրկախառնեց նորան քնքշութեամբ։

Օձուր եղաւ Մարգարիտի ջանքը յետ քարշուել նորա սիրողական փայփայանքից։ Մարգարիտի ընդդիմութիւնը տեղի տուեց աւելի և աւելի։ Նա զոհ դրեց իւր վերջին զօրութիւնը։

«Ո՛վ, գնա, հեռացիր, փորձիչ դու։ Դու ունիս աւելի քան թէ մարդկային կարողութիւն։ Ես չկամիմ այլ ևս ոչինչ լսել»։

«Լիդպէս խօսում նորա բերանը», ձայն արձակեց ստիպողը, «բայց նորա սիրտը զգում այլապէս։ Այդ սիրտը ասում. Մի անողորմ գոհ է քո կողմից, բարկանալ մի թշուառ աղջկայ վերայ, որ քեզ երբէք վերաւորել չէ։ Ո՛վ, երանի թէ ունենայի մի հրեշտակի բարբառ, որ ձայն տայի Ձեզ—»

«Հերիք է, հերիք է»։

Մարգարիտը դրեց իւր ձեռը Ֆելիսիտէի շրթունքի վերայ։

Նայց աղերսարկուն ազատեց բերանը և յառաջ տարաւ խօսքը, մինչ նորա երեսը վառվռումէր հոգեզմայլութեամբ.

«Ես ձայն կը տայի Ձեզ. փոխէր քո սրտի ոխը դէպ ի գութ, այնուհետև անպատմելի կերպով կը գեղեցկանայ քո կեանքը. այնուհետև հաճոյ կը լինիս երկնքին, որ հովանաւորելով և սիրելով կապել է իւր կապոյտ կամարը բոլոր հողածինների վերայ»։

Մարգարիտը յաղթուած էր։

Նորա աչքերը հեղեղուած էին արտասուքով։ Դողդոջուն շրթունքով խօսեց նա.

«Այո՛, այո՛, Դուռ ես Աստուծոյ պատգամաւորը, որ ես աղօթքի մէջ խնդրումէի։ Դուռ ես այդ պատգամաւորը, ով Ֆելիսիտէ»։

Ողբերգեան օրիորդը կարծումէր թէ լսումէ մի հրեշտակային քնարի նուագածութիւն։

«Այս հայհոյքը», ձայն արձակեց նա. «այս խօսքերը — այս ձայնը — բայց Ձեր գիրկը դեռ ես փակ է»։

Մարգարիտը բացեց գիրկը նորա առաջև։

«Գնա՛, արի՛։ Քեզ համարձակ է սիրել ինձ»։

Փոխադարձական ուրախութեան մէջ փաթաթուեցան Ֆելիսիտէն նորա վզին։

«Իմ քոյր, իմ սիրելի, հրեշտակատիպ քոյր»։

Մի գեղեցիկ, փառաւոր տեսարան էր, թէ ինչպէս այս երկու քաղցր կանացի կերպարանքները գրկախառնած պահումէին միմեանց։

«Այո՛, այո՛. ես այժմ ասումեմ քեզ, իմ քոյր», ասաց Մարգարիտը մի ձայնով, որի մէջ ամփոփած էր նորա սրտի բոլոր բարութիւնը։ «Թող իմ հօր հոգին ներէ ինձ, եթէ ես դորանով անիրաւութիւն եմ գործում։

Նորա գրկախառնումէին և համբուրումէին միմեանց դարձեալ և դարձեալ։

Ֆելիսիտէն իւր քնքուշ ձեռներով փայփայողապէս շոշափումէր նորա գլուխ բարեկամուհու գանգահեաւ թուշերը։ Նա ցնծալով ձայն էր արձակում։

Ով, ես ունիմ այժմ ոչ թէ միայն մի բարի, այլև մի գեղեցիկ քոյր։

Հաշտութեան հանդէսը ընդհատուեցաւ պարոն Քուրբիերի և նորա որդի Լուդովիկոսի ներս մտանելով։

Երկուքն ևս ուրախ հիացման մէջ կցեցին ձեռները, երբ որ տեսան այդ աղջիկները գրկախառնած միմեանց։

«Սայեցէք այն տեղ, հայր իմ», ցնծութեամբ ձայն արձակեց Լուդովիկոսը։

«Երդմա՛ր, այս մի ուրախ, հոգեպարար տեսարան է» մտածումէր պարոն Քուրքիները։

Երիտասարդը գրկախառնեց իւր քոյրը և ապա Ֆելիսիտէն։

«Ա՛խ, ես քաջ գիտէի, որ Հաշտութեան գործը պիտի յաջողուէր քեզ», ասաց նա աղջկան, որ կարմրելով ծածկումէր գլուխը նորա կուրծքի վերայ։

«Այո՛, նա սիրում է ինձ», պատասխանեց Ֆելիսիտէն, ակնարկելով դէպ ի Մարգարիտը, «նա չէ դադարելու սիրել ինձ։ Այսպէս չէ՞, պատուական քոյր»։

Պարոն Քուրքիների դուստրը պատասխանեց մի մեղրիմ հայեացքով։

Ընդհոր պարոնը մի շնորհակալու հայեացք ձգեց դէպ ի մատուռի առաստաղը, ապա գրկախառնեց Մարգարիտը, ձայն տալով.

«Ա՛խ իմ բարի զաւակներ. ո՞հ, երկար ժամանակից յետոյ այս է առաջին ձշմարտապէս ուրախ րոպէն իմ կեանքի»։

«Այց դեռ ևս պակաս է մինը. մեր բաղդաւորութեան համար», ասաց Լուդովիկոսը։

«Այո՛, իմ եղբայրը, բարի Գուստաֆը», ասաց Ֆելիսիտէն։ Նա էր, որ բերեց ինձ այս տեղ։

«Նա գրսումը, ծառաստանի մէջ է և սպասումէ մեր խօսակցութեան հետևանքին», ասաց Լուդովիկոսը։ «Արի, սիրելի Մարգարիտ և տուր նորան ևս իւր բաղդաւորութեան աւետիքը»։

Երբ որ Մարգարիտը լսեց Գուստաֆի անունը, զարհուրանք եկաւ նորա վերայ։ Նա յետ քարշուեցաւ, դրեց երկու ձեռքը ճակատի վերայ, որպէս թէ մտածումէր մի բանի վերայ։

Ինչպէս Լուդովիկոսը, նոյնպէս ևս պարոն Քուրքիները և Ֆելիսիտէն իջնդրեցին լուռ և անբարբառ Մարգարիտից դուրս գնալ նոցա հետ մատուռից։

Մի կարճատև յապաղանքից յետոյ պատասխանեց նա.

«Ո՛չ, ես չկամիմ երթալ Ձեր հետ։ Ես ցանկանումեմ պարոն Օրմընդի հետ խօսել այս տեղ»։

«Ո՞հ, այս տեղ այնպէս սառն և սարսափելի է», ասաց Ֆելիսիտէն։ Դրսումը փայլումէ պայծառ ու ջերմ արևալոյսը կանաչ տերևապսակների միջով։ Խոլորը շնչումէ սէր և բաղդաւորութիւն։ Այն տեղ աւելի հեշտ տեղն կը տաս դու իմ եղբօր աղերսական խօսքերին»։

«Այնու ամենայնիւ պիտոյ է ինձ խօսել նորա հետ այս տեղ», ասաց Մարգարիտը, հաստատ մնալով իւր կամքի վերայ։ Ազատեցէք ինձ այն տանջանքից, որ պիտի պատրաստէր ինձ բացայայտելը դորա պատճառը»։

Ֆելիսիտէն վշտումէր նորագիւտ քոյրը մի երկիւղալից ուշադրութեամբ։

«Դու դարձեալ նայումես տրտում երեսով, պատուական Մարգարիտ», ասաց նա, դարձեալ գրկախառնելով նորան։

Վ.ուլֆիլեւեան օրիորդը մեղմութեամբ խլեց իւր անձը նորա գրկից։

«Գնա, դու բարի զաւակ։ Դու չպիտի վշտանաս իմ տրտմութեամբս»։

«Ձվշտանամ», ձայն արձակեց Ֆելիսիտէն, «երբ որ ես տեսանումեմ քեզ տրտում։ Բայց հանգիստութիւն. գալոց օրերում այլապէս կը լինի։ Երբ որ մի արտասուք ներս կը մտանէ քո աչքի մէջ, կը սրբեմ նորան համբուրելով և այնքան երկար կը նայեմ քեզ ժպտմամբ, մինչև քո սիրելի, սիրելի երեսը այնպէս պայծառ ճառագայթուի, ինչպէս իմս։ Բարեւ մնաս, բարեւս. շուտով ուրախութեամբ վերստին կը տեսանենք միմեանց»։

Նա, Լ.ուդովիկոսի և պարոն Վ.ուլֆիլերի հետ շուտով դուրս գնաց մատուռից, որ լուր բերէ իւր եղբօրը, որ իւրեան յայտնել էր համոզել Մարգարիտի սիրտը, ոչնչ արգելք այսուհետև չպատրաստելու իւր սիրոյն, այլև թէ նա սպասումեր Գուստաֆին մատուռում, որ, ինչպէս հաւանական է, մի նպատակի բաղդատորութեան աւետիք տայ նորան։

Երբ որ Մարգարիտը միայն էր, դիմեց դէպ ի իւր ծնողների գերեզմանը, ծունր խոնարհեցրեց նորա մէջ և ասաց մեղմ մի կարճ, բայց ջերմեռանդն աղօթք։

Երբ որ նա լսեց մատուռի դրան բացուիլը, տեղից բարձրացաւ և հանդէպ գնաց եկաւորին, ասելով։

«Ո՛վ իմ բարեկամ, որպիսի քոյր պարգեւել է Ձեզ Աստուած։ Նա է նոյն իսկ մարմնացած անմեղութիւնը, ամենամաքուր, ամենասուրբ սէրը»։

«Ո՜ւ հաշտութեան հրեշտակ։ Այժմ, իմ պատուական Մարգարիտ, ինչ ունիք ասելու ինձ»։

Վ.ուստաֆը համբուրեց նորա ձեռը և սեղմեց նորան իւր սրտի վերայ։

Մարգարիտը չխլեց ձեռը նորանից, բայց նորա երեսի վերայ մնաց մի խորին ծանրութիւն նստած։

«Վ.ուստաֆ», ասաց նա, հաւատո՞ էք Դուք, որ Ձեր հայրը թոյլ կը տար զուգաւորութիւնը Ֆելիսիտէի և իմ եղբօր մէջ, եթէ վերահասու ևս լինէր սորա ազգատոհմի ճշմարիտ անուանը։

«Նա դիտէ դորան արդէն», պատասխանեց երիտասարդը։ Երկիւղը մի մեծակայ մահուց բացել է ինձ նորա սիրտը, և նա հաւատացել է ինձ ամենայն գաղտնիք, որ ես արդէն խնայել եմ Ձեզանից։ Այո՛, նա պարտական է։ Բայց նորա սիրտը ըմբռնուած է մի խորին զղջմանից։ Մի ժամանակ այնքան զօրեղ մարդը դարձել է մի ալեւորի նման և նորա երեսի գծագրութը տգեղացուցել են յուսահատութիւնը և մահու երկիւղը»։

«Նա հաւատացել է Ձեզ ամենայն բան, ասումէք Դուք», պատասխանեց Մարգարիտը։ «Եւ նոյնպէս, թէ գուշակող կինը սպառնացել էր նորան մի ահաւոր վախճան»։

«Այո՛, այդ չարագուշակ կինը։ Ես աշխատեցայ օրհնել Բուլարդը, բայց նա անկնար չէր բացել էր։ Բայց ուստի դիտէր Դուք —»

Մարգարիտը շուտով և սաստկութեամբ ըմբռնեց նորա ձեռը։ Նորա աչքը լոցավառվում էր։

«Ես թէ տիկին Բուլարդը երկնքի վրէժը ցած կարդաց Մարկիզ Օրմենդի վերայ։ Ես ինքս էի, որ կատարումէի նորա պաշտօնը»։

Գուստաֆը զարհուրած, չէտ քարշուելցաւ մի քայլափոխ։

«Ո՞վ իմ Աստուած. Դո՞ւք էիք — Դո՞ւք»։

«Այո՛, ես էի»։

«Ո՞վ, այժմ բացայայտ է ինձ ամենայն բան»։

«Ինդրեցէք ձեր հօր վրէժը, իմ պարոն. պատճառ, ես — ես եմ ա-նիծել նորան»։

Երիտասարդը կարօտ էր մի քանի րոպէի, հանգստանալու իւր սրտի մէջ յառաջացած դղրդիւնից։ Այս միջոցիս Մարգարիտը կանգնած էր նորա առաջև, զննելով նորան սիրոյ և կարեցկութեան յայտնութեամբ։

Ալ երջապէս Գուստաֆը բաց արեց բերանը.

«Ո՛վ Մարգարիտ, անէծքը կարող է բարձուիլ իմ հօր գլխից։ Մարդկեղէն բան է վրէժխնդիր լինել, բայց աստուածայնաբար մէծ է ներել պարտաւորին, երբ որ նա ողորմութիւն աղերսելով, պարզումէ ձեռքը դէպ ի մեզ»։

Վրէժխնդրութեան օրիորդը շարժեց գլուխը։

«Ես նորա գալոցքը յանձնումեմ յաւիտենական դատաւորին», ասաց նա։ Թող իմ եղբայրս անմահանայ Գեվիսիտէի հետ։ Բայց մեք, Գուստաֆ, պիտի այս կեանքումն բաժանուինք միմեանցից։ Ես միայն կամիմ լինել վերջին զոհը։

Խարեկամը խորին խոհութեան մէջ նայում էր նորան։

«Ի՛նչպէս, Մարգարիտ. մի՞թէ պիտոյ էր ինձ զրկուիլ քեզանից»։

Օրիորդը արձակեց մի մեղմ հառաչանք։

«Դուք, իմ բարեկամ», ասաց նա, «արժանի էք ամենաղնիւ կնոջ սիրոյն։ Դուք մի օր կ'ընտրէք ձեզ մի այլ ամուսնակից, կը սիրէք նորան և կը լինիք նորան սիրելի։ Ո՜հ, ուր և լինէի ես, իմ ջերմ աղօթքս Ձեր բաղդաւորութեան համար ամենայն օր կ'ելանէ դէպ ի երկինք»։

Գուստաֆը իսկոյն ընկաւ նորա ոտքը. նա փաթաթեց ձեռը նորա մէջքին և սաստկութեամբ ձայն արձակեց։

«Ո՛չ, ո՛չ. ես կարող չեմ հրաժարուիլ Ձեզանից։ Ես որոշել եմ արդէն։ Երդվումեմ քեզ, որ արևը այն օրի, որ յաւիտեան յաւիշտակելու է քեզ ինձանից, մայր չէ մտանելու իմ աչքի առաջև»։

Աղջիկը կապած ու սառած նայեց նորա վերայ։

«Գուստաֆ, այդ ի՞նչ սարսափելի խորհուրդ է»։

«Իմ հոգին ամենասուրբ կապերով կապուած է քո հոգու հետ», խօսքը յառաջ տարաւ երիտասարդը։ Եթէ գահավիժ կործանում ի արեգակը որ պահումէ երկիրը իւր շրջանառութեան շաւղի մէջ, և դա պիտի չարդու-

*փշուր լինի, այլ և չգտանելով ոչինչ հաստատուն հիմն անչափելի արարչագործութեան մէջ»։*

*Մարգարիտը աղերսելով կցեց ձեռները։*

*«Ողորմեցէք ինձ, բարեկամ, ողորմեցէք ինձ։ Ձեր ամէն մի խօսքը է մի մահաբեր տանջանք»։*

*Երիտասարդը բարձրացաւ կամաց։ Մի դառն ժպտումն պատեց նորա շրթունքի վերայ։ Նա խօսեց յանդիմանութեամբ լի, կարող ու խոցոտիչ ոճով.*

*«Ո՜վ, Ձեր սիրտը զննուրված է վրէժխնդրութեան երկաթի զգաստով։ Սիրոյ աղերսանքը մտնելում չէ ձեր կարծր պողպատին։ Բարի է, փախչել թողէք իմ հօրս մեռանել յուսահատութեան մէջ — սպանեցէք ինձ և։ Ո՜վ, դուք աւելի գերազանցութեամբ առաստպելքի մէջ յիշած Գուրիայքը (կատաղի կանայքը)։ Սոքա հալածել են միայն պարտաւորը. բայց դուք հօր վրէժը խնդրելիք և մեղապարտի որդուց, մի տղամարդից որ հազար անգամ տալու էր իւր կեանքը, եթէ դորանով կարող էր գնել Ձեր համար մի ժամ բաղդաւորութիւն»։*

*Այս խօսքերը իրրև վառուն դաշնակներ (խանչարներ) թափանցեցին անբաղդ աղջկայ սրտի մէջ։ Երեսը փամփթելով իւր քօղի մէջ, սկսաւ բարձրաձայն հեկեկալ, յարձակուելցաւ նորա վերայ և սաստկութեամբ սեղմեց նորան կուրծքին։*

*Աղջկայ ցաւը շարժեց երիտասարդի զութը. կակուղ ձայնով խօսեց սա։*

*«Մարգարիտ, կամիս դու հետևիլ ինձ, իմ հօրս վերստին տալու կեանքի յոյս»։*

*«Գնացէք, աղաչումեմ Ձեզ», հառաչեց նա աղօտաձայն։*

*«Ո՛չ պիտակ լինի», ասաց երիտասարդը։ «Կեանք թէ մահ քո ձեռումն է։ Ես վերադառնումեմ դէպ ի իմ հօր ապարանքը։ Թէպէտև նա պարտաւոր էր, բայց ես նորա որդին եմ, և որպէս որդի կը լցուցանեմ իմ պարտականութիւնս։ Դու այլ ևս չես տեսանելու ինձ այս տեղ։ Ես կը սպասեմ քեզ մինչև ութ օր։ Եթէ չգաս դու և կը փախչես այն տեղից, ուր քեզ կանչումէ երկնքի հրամանի պատուէրը և սիրոյ ջերմ աղաչանքը, այնուհետև մի համարիր ինձ այլ ևս կենդանիների շարքում։ Նոյն օրին, երբ իմ տագնապած հայրս կը մեռանի, և ես կը գտանեմ հանգիստ»։*

*Երիտասարդը դարձուց երեսը և դուրս գնաց մատուռից։*

*Դուռը թնդիւնով ծածկուեցաւ։ Մարգարիտը զգում էր, որ դորա հետ միասին փակուեցան և իւր գալոց օրերը։*

*Բայց չունէր նա իւր մէջ այն զօրութիւնը, որով կարող էր դարձեալ բանալ այդ դուռը։ Մի՞ թէ նա իւր հօր վրէժը հանել չէր այն զարհուրելի խայթերով խոշի որ Մարկիզ Օրմընդը գցացել էր իւր մէջ սկսեալ այն րոպէից, երբ Մարգարիտը որպէս գուշակող կին հանդիպել էր նորան։ Մի՞ թէ*

Աստուածները պիտի լինէր նոյնպէս անվերջ, ինչպէս Սէրը։ Ո՞չ ապաքէն Միջնորդն Աստուծոյ և մարդերի, մեռանելով Golgոթա սարի վերայ, իր կեանքի վերջին րոպէում խնդրել էր իւր երկնաւոր Հօրից թողուլ իւր սպանողների մեղքը։ Նորա օրինակը գրեթէ երկու հազար տարիների միջով լուսատու էր ներկայ ժամանակիս։ Մի՛ թէ իւր Հօր Հոգին բարկանալու էր նորա վերայ, եթէ նա հետևէր այս վսեմական օրինակին։

Ա՛հա, սոքա էին մտածութիւնքը որ Մարգարիտի ուղեղի մէջ շարժվում էին և նորա սիրտը դողալցնում էին, երբ որ Գուստաֆը հրաժարուել էր նորանից։ Նորա ժամէ ժամ աւելի զօրանում էին, որովհետև կրում էին իւրեանց մէջ ճշմարտութեան զօրութիւնը։ Այդ մտածութիւնքը ցերեկով խլում էին նորա հանգիստը և գիշերով դուրս էին փախցնում մահճից։ Դոքա վարում էին անդադար աղջիկը կէս գիշերի լուսնեան մէջ դէպ ի մատուռը, ուր նա վառուն ճակատը սեղմում էր գերեզմանի սառն մարմարիոնի վերայ և աղերսում էր դէպ ի երկինք վերացնել նորան երկրից, և իւր սիրած տղամարդի մտքից հանել այն խորհուրդը որ էր, ապրել միայն, եթէ Մարգարիտը թողուելիւն կը շնորհէր։

Օրերը վազում էին արագ, և Գուստաֆից պայմանադրած ժամանակը մտենում էր օրէ օր աւելի։

Այս միջոցիս և Օրմենդեան Ֆելիսիտէն քանի մի անգամ երևեցաւ Քուրրիների ամրոցում։ Բայց Մարգարիտը փախչում էր մօտակայ անտառի տերևախիտ ծառերի մէջ, և փոքրիկ աղջիկը կարող չէր ոչ տեսանել նորան և ոչ խօսել նորա հետ։

Վերջապէս պիտի մի օր ևս անցանէր, և ահա վճռուեցաւ նորա ճակատագիրը։

Այժմ նորա տագնապը հասել էր իւր ամենավերին ծայրին։

Այս օրի առաւօտուն, արևաբացին արդէն դիմել դէպ ի մատուռը։

Այն տեղ մնաց մի քանի ժամ։

Երբ որ դարձեալ դուրս գնաց այն տեղից, աւելի գունաթափ էր նա, քան թէ սովորաբար, բայց և սրտապնդուած։

Օրանրաքայլ գնաց նա դէպ ի ամրոցը և որոնելով գտաւ Պարոն Քուրրիեռը իւր մատենադարանի մէջ.

«Հայր իմ, ասաց նա, այսօր հրաժարվումիմ Ձեզանից»։

«Որ կամիս գնալ, իմ զաւակ», հարցրեց ալևորը։

«Դէպ ի փարիզ, հայր իմ»։

«Ե՞ւ ինչ պատճառով»։

«Կամիմ դիմել դէպ ի Օրմենդի ապարանքը»։

«Արկինքո՞ մօտ»։

«Բայց մի հարցանէք ինձանից, թէ ինչ պիտի առնեմ այն տեղ»։

«Դու կամիս հաշտութիւն տանել այն տեղ. այսպէ՞ս չէ»։

«Կամիմ Գուստաֆի հետ խօսել»։

«Ո՛խիմարնե՛ր նորան, հանգստացնե՛ր նորան»։

«Ձգիտեմ պդ։ Ա՛յժմ չունիմ ես ոչինչ յայտարար խօսքեր այն գործի համար, որ ես յոյս ունիմ լցուցանելու այն տեղ։ Բարեաւ մնաք, հայր եմ. բայց մինչև կը բաժանուէի Ձեղանից, խնդրումեմ Ձեր օրհնութիւնը»։

Նա չոքեց աւետրի առաջև և խոնարհեցրեց գլուխը։

Պարոն Քուրքիեռը դրեց իւր աջոյ ձեռը նորա մազերի վերայ։

«Կ՛ելնէ Դուն խնդրումես իմ օրհնութիւնը քո գործի համար, ապա քո դիտաւորութիւնը պիտի բարի լինի։ Ես տալիս եմ քեզ իմ օրհնութիւնը լի ու առատ սրտով»։

Ա՛յս րոպէիս Լուդովիկոսը ներս մեաւ սենեկի մէջ։

Նա տեսաւ իւր քոյրը և հայրապիրը միասին, և մնաց հիացմամբ կանգնած։

«Ա՛օտ արի, իմ՝ որդի», ասաց աւետրը։ «Գրկախառնի՛ր քո քոյրը։ Նա ուղևորվումէ դէպ ի Փարիզ և օտը կը կոխէ այն տան շէմքի վերայ, ուր բնակումէ քո սէրը»։

Եղիտասարդի աչքերը լոցալառուեցան ուրախութենից։

«Դէպ ի Փարի՛զ կամիս Դու», ձայն արձակեց եղբայրը։ «Ֆելիսիտէ՛ և Գուստաֆի՛ մօտ։ Ո՛վ, այնու հետև աւելոյն բան, աւելոյն բան կը բարեկարգուի։ Աստուածծ է ազդել է քո մէջ այդ խորհուրդը»։

Եղբայր ու քոյր քնքշութեամբ գրկախառնուեցին իրևար։

Ա՛յնուհետև Մարգարիտը թողեց ամրոցը և մի սայլի մէջ, որ լծած էր երկու սրընթաց ձիերով, արշաւեց դէպ ի մայրաքաղաքը։

## ԳՕԹՈՒԱՆ ԻՆՆԵՐՈՐԴ։

## ԴԱՐՁԵԱԼ ՄԻԱՆԳԱՄ ԵՐԵԻՈՒՄԷ ԳՈՒՇԱԿՈՂ ԿԻՆԸ։

Ա՛րկիզի հիւանդութիւնը վերջին ժամանակում վերստին զօրացել էր։ Ա՛յն լուրենից որ իւր որդին ցուցանումէր իւր յարակցութեան մասին անբաղդ Օրանժի աղջկայ հետ, խմաստասիրել էր նա, որ Մարգարիտը չկամէր ոչինչ հաշտութիւն։ Ուրեմն գա գուշակումէր թէ յանցաւորը Մարկիզն է, այլև իրաւացի պատճառ ունէր ատելու նորան, գարշելու նորանից։ Թէ Ֆելիսիտէն լուր էր բերել նորան, որ աչերո պարոն Քուրքիեռը հաւան էր Ֆելիսիտէի և Լուդովիկոսի հարսն ու փեսայութեանը — այդ բաւական չէր իւր տանջուած հոգուն. պատճառ, նա կամէր բաղդաւոր տեսանել իւր երկոքին զաւակները։ Ո՛հ, որդու գունաթափ և վշտալից երեսը ոչինչ յոյս չէր տալիս իւրեան, թէ այդ ցանկութիւնը կարող էր լցուցանուիլ։ Նորա ղարհուրելի հրաշները վերստին էին։ Մարգարէ հինոջ կերպարանքը ամեն

ժամ հալածումէր նորան մի տենդոտ քնի միջից։ Սկզբումը նորան երևում էր այդ կինը միայն, բայց տենդը զօրանալով, Մարկիզը իւր ցնորական երևոյթների մէջ տեսանում էր նորա մի ալևոր ընկերակցով որոյ մարմինը և անդամքը պատած էին հարիւրաւոր արիւնահոս խոցերով։ Նա լսում էր այդ կնոջ ահագուժիկ ձայնը, այսպէս խօսելով.

«Տե՛ս ահա. այս քո արածն է։ Այսպէս ահա նորա մարմինը ծուատուել է տանջանարանի մէջ։ Դուռ ես նորա սպանողը, նորա սպանողը, նորա սպանողը»։

Այս պատկերը, այս խօսքերը հալածումէին նորան և ցերեկի արթնութեան մէջ։ Նա կարող չէր մի րոպէ միայն թողնել իւր անդութեան սենեկի մէջ, առանց որ և իցէ երկիւղից աղաղակ բարձրացնելու և օգնութիւն կանչելու։

Այսպէս ահա, Մարգարիտի անէծքը, երևումէր, թէ պիտի կատարուէր։ Մարկիզի կերպարանքը ընկճուած էր. նորա մարմինը զարհուրիչ կերպով հալումաշ. աչքերը խոր էին ընկել իւրեանց փոսերի մէջ և նորա երեսը կրումէր արդէն մահու դիանման գոյնը։ Այնպէս էր երևում, որ նա նշմարների տասերկուսից, իւր բարերարի մահուան օրից շատ յառաջ պիտի իւր մահով պարտավճար լինէր, և յաճախ ասումէր իւր որդուն.

«Մի՛ հեռացիր ինձանից, իմ Գուտտաֆ. որովհետև արդէն գալոց րոպէին կարող էր վերայ հասանել իմ մահը։ Եւ գու պիտի մնա լինէիր ինձ, օգնական լինելու ինձ մահու մէջ։ Ֆելիսիտէն թող ներկայ չլինի — ոչ, այդ չկամիմ ես. պատճառ, վերջին տագնապի մէջ կարող էին բերանից խօսքեր գուրս գալ, որ նորա սիրտը թունաւորելու էին, բայց նա թող բաղդաւոր լինի, բաղդաւոր։

Ժամանակը երևկոյացել էր, և ահա արևը մնում էր մայր մտանելու։ Երկինքը ամպերից աղատ տարածվումէր համաշխարհական քաղաքի վերայ։ Ցերեկի լուսաւորը հրաժարուելով գուշակումէր, թէ նա փարիզի աշտարակները և տների ծայրերը զարգարելու էր իւր ամենագեղեցիկ վարդերով։

Մարկիզի ապարանքի դիրքը այնպէս էր, որ մի կողմիցը այն սենեկի, որ կից էր հիւանդի սենեկին, կարելի էր շատ այգիների վերայով տարածել հայեացքը դէպ ի արևմուտք, ուր արեգակը պիտի հանդստանար։

Մարկիզը իւր բարեկեցութեան օրերում շատ անգամ վայելել էր մայր մտանող արեգակի փառաւոր տեսարանը, և ասել էր ինքն իւրեան.

«Թէպէտև քո կեանքի արևալացը չէ եղել այնպէս փառաւոր, ինչպէս արեգակինը, սակայն դու ոյժ ունիս, նորա նման, լիամտան փառահեղութեամբ հրաժարուիլ երկրից»։

Այս ոյժը արդարև աւերակ էր դարձել գուշակող կնոջ անէծքով։ Այնու ամենայնիւ Մարկիզը, եթէ թոյլ էր տալիս նորա որպիսութիւնը, իւրեան տանել էր տալիս բժշկի և որդու օգնականութեամբ դէպ ի իւր սի-

*րած տեղը պատուհանի մօտ, նստումէր այն տեղ աթոռի վերայ և աչքը լեւեռումէր դէպ ի արեւմուտք, մինչև խորին երեկոյեան մութը ծածկումէր հորիզոնը։ Ինչ որ նա մտածումէր, ասում չէր, բայց մեք կարծում ենք թէ պատշակել ենք այդ բանը, եթէ ասէինք թէ նորա մտածութիւնքը էին այսպէս.*

*«Կարձեալ միանգամ կամէի ես տեսանել արեւամուտը, որովհետև գուցէ թէ էգուց անկարելի կը լիներ ինձ այդ բանը»։*

*Այսպէս հաւատի վկայում էր նորա սիրտը իւր մահը։*

*Այ՛ւ այսօր իւր որդու և բժիշկ Բենջի օգնականութեամբ դիմեց նա դէպ ի իւր տեղը լուսամուտի մօտ։*

*Երկոքին լաւ քարշուեցան, թողնելով նորան իւր մտածմունքին։ Բայց Մարկիզը ահ ու դողով նայումէր նոցա հետևից և խնդրումէր.*

*«Իմ որդի, դոքտոր Բենս, մի թողէք ինձ միայն։ Մնացէք իմ կողքումս, մօտ կացէք ինձ, ամենևին մօտիկ։ Ինձ թվումէ, որպէս թէ այն զարհուրելի կերպարանքը, որ վերջին գիշերը տանջել է ինձ, թեև դուք իմ մօտ էք, կարող էր դուրս գալ ննջարանից, նայել իմ վերայ վառուն աչքերով և շարժել իւր օձային մազերը։ Երբ որ նա գայ, դուք պիտի պաշտպանէք ինձ, հալածէք նորան։ Ահա, ահա,—չէք տեսանում. դուռը բացվումէ։*

*Ոյա հալումաշուած ձեռքով մատնացոյց արեց ննջարանի դուռը։*

*«Դուռը սեղմվումէ, հայր իմ», պատասխանեց Գուստաֆը։ «Սենեակը փակած է»։*

*«Ա՛հ, ոչ։ Եթէ այդպէս լինէր, ինչպէս կարող էր այն կինը կանգնած լինել չէմքի վերայ, և սպառնալով բարձրացնել ձեռը իմ վերայ»։*

*«Այս ոչ ոք տեսանում չեմ, հաւատացնումեմ քեզ»։*

*«Այց ես, ես տեսանումեմ նորան յայտնապէս—Շո՛ւտ լսում դու»։*

*«Ի՛նչ, հայր իմ»։*

*«Այն դատարկ գերեզմանական ձայնը—նա խօսումէ. մեռ մեր նոյեմբերի տասներկուսը»։*

*«Ձեր տեղը վերադառնումէ, հայր իմ»։*

*«Այ՛ս տեղից շարժվումէ նա—նա մօտենումէ ինձ, աւելի և աւելի յաւաչ գալով—ահա ձգումէ ձեռքը դէպ ի ինձ։ Փրկիր ինձ, իմ որդի, փրկիր ինձ»։*

*Մարկիզը գրկախառնումէ Գուստաֆին և ծածկումէ գլուխը նորա կուրծքի վերայ։*

*Ժիշկ Բենսն շտապումէ դէպ ի մօտակայ սեղանը, որի վերայ գրած էր մի հանգստացուցիչ ճար։ Մի քանի կաթիլ դարանից ածումէ մի ջրալից բաժակի մէջ և մատուցանումէ հիւանդին։*

*«Այ՛ս, պարոն Մարկիզ, ի սէր Աստուծոյ ընդունեցէք այս ճարը, մի յապաղէք»։*

Հիւանդը, առանց բարձրացնելու գլուխը, մերժումի բժշկի մատուցած դեղի բաժակը։

«Ի՛նչ պիտի օգնէ ինձ այդ ըմպելին», ասումէր նա քթի տակ։ «Դա մի կաթիլ ջուր է մի վատուն երկաթի վերայ։ Ո՛չ, ոչ։ կանչեցէք այն աղջիկը»։

«Ի՛նչ աղջիկ, իմ հայր», հարցրեց Գուստաֆը։

«Ֆելիսիտէ զաւակս։ Նորա մօտակայքից փախչումէ այն զարհուրելի առաչօք տեսիլը։ Շուտով, շուտով. կատարեցէք ինչ որ հրամայումեմ»։

Որդին իսկոյն նշանացի արեց բժշկին։

Սա դուրս գնաց իսկոյն, կանչելու Ֆելիսիտէն որ պատմէումէր իւր սենեկում։

Երկար չտևեց, և ահա երևեցաւ մանուկ աղջիկը։

«Ես հաւասիկ եմ, սիրելի հայր իմ, հնչեց նորա բերանից»։

Լսելով նորա ձայնը, իսկոյն վերուղղեց Մարկիզը իւր անձը։

«Դու, դու։ փա՜ռք Աստուծոյ, փա՜ռք Աստուծոյ»։

Մարկիզի աչքը թափառումէր սենեկի մէջ։ Նորա կուրծքից դուրս եկաւ մի երկար շնչարձակութիւն։

«Բղարև այն կինը այլ ևս չէ այս տեղ», շշնջեց նա։ «Ո՛վ, ևս լաւ գիտէի, լաւ գիտէի»։

Մանուկ աղջիկը չոքեց ծնկերի վերայ, հօրը կից մօտ, բռնեց նորա ձեռքը և ասաց.

«Այժմ ես կը ճեամ քո մօտ, բոլոր երեկոն. ես կը զբուցիմ քո հետ, կը կարդամ քեզ մի բան, մինչև քունդ կը գայ և մեղմութեամբ կը փակէ աչքերդ։ Այնուհետև լոյս ունիմ, որ գալոց գիշերին նորոգուելու չէ քո տենդը»։

Մարկիզը նազելի աղջկայ, իւր, ինչպէս ասումէր, պահապան հրեշտակի ներկայութեամբ իւր անձը ահուդողից ազատուած զգալով, փայփայումէր նորա մազերի օղերը, նորա թմուշները և համբուրումէր նորա ճակատը։

Այս րոպէիս երեկոյեան արևը ձգումէր մի կարմրագոյն փայլողութիւն սենեկի մէջ և լուսաւորումէր նորա մէջ եղած անձինքը։

«Ո՞հ, ինչպէս առողջ է այժմ ձեր կերպարանքը», ասաց Ֆելիսիտէն։ «Այդպէս, մնաք ուժեմ, մի քանի ամսի մէջ դարձեալ կը զուարթանայ իմ սիրելի հօր երեսը, դարձեալ կը ճառագայթուի նորա աչքը այն օրին, երբ Լուդովիկոսը և ես կը կապենք այն միջնլենաւոր դաշը օրին Դուք այնքան ցանկանումէք»։

«Այո՛, իմ սիրելի զաւակ, այդպէս է իմ ցանկութիւնս»։ Այդ օրին, եթէ հասանեմ դորան, շատ բաղդաւոր կը լինիմ։ Այս պատճառով, այդ օրը պիտի շուտով մօտենայ, ինչու համար դեռ ևս յապաղումէ ալևոր պա-

*րան Քուրթիերը գալ ինձ տեսնելիուն։ Մեր կարող էինք ամուսնական դաշնաւորութեան պայմանքը իսկոյն կարգի դնել»։*

Ցնելիսիտէն շարժեց գլուխը։

«Կարող չեմ ասել Ձեզ, սիրելի հայր։ Բայց այս ունիմ ես, որ նա այս օրերուս կը լինի մեր մօտ, ըստ որում Մարգարիտը տուել է արդէն իւր հաւանութիւնը»։

Ո՛րչափ լինու մեր այս խօսակցութիւնը պատուհանին կից մօտ, մի ծաւալ, որին նկատել չէին խօսողքը, մեղմով ներս էր մտել սենեակը և մնացել էր դրան մօտ կանգնած։

Գուստաֆը մօտեցել էր նորան և հարցրել էր.

«Ո՛նչ լուր ունիս, Պետրոս»։

«Մի մարդ կայ դրսումը», շշնջեց ծառան։

«Ո՞վ է»։

«Մի կնամարդ։ Նա կամի խօսել Ձեր հետ, պարոն Օրմնդ»։

«Ո՛նպէս է նորա անունը»։

«Ընունը չկամեցաւ ասել»։

«Ինս երբէք տեսած չեմ նորան»։

«Ո՛նչպէս»։

«Պատճառ, նորա երեսը ծածկած է մի թանձր սեւ քօղով»։

«Մի գուշակութիւն շարժուեցաւ երիտասարդի սրտի մէջ»։

Ալաղուան օրին վերջանումեր արդէն որոշած ժամանակը որ նա տուել էր Քուրթիերեան օրիորդին։ Գուցէ սորա սիրտը կակղացել էր, գուցէ սա եկած էր դէպ ի Փարիզ, որ ինդրէ իւրեան։

Գուստաֆը կամաց դուրս գնաց սենեկից։

Արահետը, ուր եկաւորքը սովորութիւն ունէին մնալու, մինչև նոցա գալուստը լմնաց կը տային տանուտիրոջը, Գուստաֆը հաստատած գտաւ իւր գուշակութիւնը։

Քուրթիերեան Մարգարիտը հանդէպ գնաց նորան և շուտով յիշ քարշուեց քօղը որ ծածկումեր նորա երեսը։

Նորա երեսի յայտնաղութիւնը ցաւալից էր։ Նորա մէջ նկարվումեր մի պատերազմ որին համբերել էր նա։

Գուստաֆը տարածեց գիրկը նորա առաջև։ Բայց նա չզրկախառնեց նորան։ Ցնորհայեաց նայելով նորան, ասաց նա.

«Ո՛չ սիրոյ շնորհին պիտի նայի և յառաջ արժանի կացուցանեմ իմ անձս։ Դուք պատրիք ինձ, թէ Ձեր հայրը մերձ ի մահ հիւանդ է։ Ես եկել եմ նորան փրկելու, եթէ հաճոյ է երկնային տեսչութեանը»։

Ո՛չնահետև մի կարճ խօսակցութիւն եղաւ երկու սիրողների մէջ։

«Հաւատալ կացէք, պատուական Մարգարիտ», ասաց Գուստաֆը, որ արդար ու ճշմարիտ է այն զգացումն որ ցոյց ես, իմ հայրս»։

«Ես հաւատում եմ քեզ, իմ բարեկամ», պատասխանեց աղջիկը, և այս հաւատը միայն քաջալերում էր ինձ դէպ ի այն ձեռնարկութիւնը որ յղացել եմ ես։ Բայց ոչ այսօր — ես տակաւին ղգում չեմ իմ անձը բաւական ըօրեղ այդ գործի համար. ես ուզում եմ փորձ փորձել վերահին դարձնելու Ձեր հօրը նորա սրտի խաղաղութիւնը։ Թոյլ տուեցէք ինձ վայելել Ձեր հիւրասիրութիւնը և այս գիշերս Ձեր սիրարժան քոյրը մնամ, Օրմնդի ապարանքում մնալ»։

«Դուք բաղդատոր էք կացուցանում մեզ այդ ձեր առաջարկութեամբ», ասաց Գուստաֆը, որովհետև իրրև պատգամաւոր խաղաղութեան այս տեղ էր։ Ես իսկոյն կը կանչեմ Ֆելիսիտէն, որ գտանենք իւր հօր սենեկում. նա աշխատում է հանգստացնել նորան։ Դա է այն հրեշտակը որոյ երեսից հալածվում են հիւանդի վայրենի ցնորական տեսիլքը, ինչպես գիշերի ստուերը փախչում է առաւօտեան մեղմ արշալոյսի երեսից։

«Ես ևս ղգացել իմ նորա նազելի կերպարանքի գերօրինակ կախարդող ազդեցութիւնը։ Նորա տեսութիւնը, նորա գիշաշարժ ձայնը յեղափոխեց իմ ատելութիւնս դէպ ի յաւ, որ ես այնպիսի ահաւոր ատելութեամբ ատել էի։ Ո՜հ, ես փափագում եմ փակել նորան իմ գրկախառնութեան մէջ»։

Մի քանի րոպէից յետոյ կը լինի նա ձեր մօտ։ Ո՜վ, շնորհակալ եմ Ձեզ, շնորհակալ, Մարգարիտ, ձեր գալստեան համար։ Իմ սիրոս ասում է ինձ, որ այսուհետև ամենայն բան կը բարեկարգուի։

Գուստաֆը քնքշութեամբ համբուրեց իւր սիրականի ձեռը և վերադարձաւ իւր հօր մօտ։

Նա գտաւ հայրը Ֆելիսիտէի գրկի մէջ։ Ֆելիսիտէն նստած էր նորա կողքում։ Հօր գլուխը հանգստացել էր իւր սիրականի կուրծքի վերայ. աղջկայ աջյ ձեռը դրած էր նորա ճակատի վերայ։ Մարկիզը փակել էր աչքերը որպես թէ նիրհելու համար։

«Քնած է մեր հայրը», կամաց հարցրեց Գուստաֆը։

Ֆելիսիտէն շարժեց գլուխը։

«Դեռ ևս ոչ. բայց նա փափագում է հանգստութեան։ Այսպէս չէ՞, հայր իմ»։

Մարկիզը ասաց, այո՛։

«Կարծում եմ, այս գիշեր կը գտանեմ գորան. պատճառ, դու, իմ ղաւակ, հալածել ես այն չար ոգիը»։

Մարկիզը վերուղղեց իւր անձը և դուրս նայեց պատուհանից։

«Բրեգակը գնացել է հանգստանալու», ասաց նա։ Ես ևս կամիմ ընդունել, որովհետև ղգում եմ իմ անձը մնայուն չափ վաստակած։ Տարէք ինձ դէպ ի անկողինս, իմ բարի որդիք։

Գուստաֆի և Ֆելիսիտէի օգնականութեամբ դարձեալ մնաց նա իւր ննջարանը։ Սիրոյ ձեռը տեղաւորեց նորան փափուկ և հարմար։

Այնուհետև յօժարութեամբ ընդունեց նա լուծկական ըմպելին, որ մատուց նորան տակաւին ներկայ գտանուած գօրաւոր բնաւն։ Հիւանդի գլուխը ցած ընկաւ։ Մի քանի րոպէ յետոյ քունը ցանկց իւր թմրեցուցիչ մեկնի հատիկները նորա աչքերի վերայ։ Իւր աղջկանից մի հատիկը առած, տարաւ քունը։

Այնուհետև գուստաֆը յետ քարշուեցաւ հօր մահճից և նշանացի արեց քուերը։

Այս ոտնաձայների վերայ մօտեցաւ նորան։

Եղբայրը շշնջեց նորա ականջին մի բան։

Կուր աչքը լուսափայլեցաւ ուրախութեամբ։

«Ա՛շմարիմ ես ասում, սիրելի Գուստաֆ»։

«Գնա և ատուգիր ինքդ»։

Աղջիկը դիմեց դէպ ի գուռը։ Խակոյն վերադարձաւ նա։

«Խաչց մեր հայրը—»

«Այս կը մնամ նորա մօտ», ասաց եղբայրը։ Եթէ զարթնէր նա և խնդրէր քեզ, կը կանչեմ քեզ»։

Այս պատասխանուվս միամտաւած Ֆելիսիտէն, հեռացաւ շուտով, որ իւր նորագիւտ քուեր գալուստը հոգեվնասլու թեամբ ողջունէ։

Ընդամէնը ուրախութեամբ թռաւ նա և փութաջեռուեցաւ Մարգարիտի վզին և համբուրեց նորան քնքշութեամբ։

Մարգարիտը նոյնպէս գրկախառնեց Ֆելիսիտէին։

«Ցոյս ունիմ, որ ես բերելու եմ բաղդաւորութիւն», ասաց նա։

«Միայն ես եկած գուռ, պատուական քոյր», հարցրեց Ֆելիսիտէն։

«Այո՛, սիրելի զաւակ»։

«Ձեր հայրը և Լուգովիկոսը—իմ—»

«Ձեր սրտի սիրելին պարոն Քուրբիերի հետ միասին էգուց չէ, միւս օրը այս տեղ կը լինի»։

«Այդ մի լուր է, որոյ համար պիտոյ է ինձ համբուրել քեզ»։

«Խաչց ընդհէր չկամէին նոքա էգուց արդէն գալ, յաւելացրեց Մարգարիտը»։

«Դա ունի իւր պատճառքը»։

«Կարօղ եմ իմանալ դորանց»։

«Ո՛չ, պատուական Ֆելիսիտէ. ուրեմն աւելի բան մի հարցրու»։

«Խարի է. ես չկամիմ անհանգիստ առնել քեզ։ Արի այժմ, սիրելի քոյր, տանեմ քեզ իմ սենեակս»։

Ձեռք ձեռքի տուած երկու աղջիկները դիմեցին այն տեղ։

Ֆելիսիտէն հրամայեց սպասաւորներին ճրագ բերել։

Եղբ որ մանուկ աղջկայ գեղեցիկ զարդարած սենեակը լուսաւորուած էր, նոքա նստան միասին մուգ կարմիր պլուշով պատած սոֆայի վերայ։

«Ո՞վ ինչքան երջանիկ եմ զգում ինձ», ըսուցեց Ֆելիսիտէն, «քեզ վերջապէս տեսանելով այս տեղ։ Դու այնպէս շտապով վերադառնալու չես դէպ ի վէհսեռն, այլ երկար և երկար կը ճեպիր այս տեղ։ Երբ որ իմ հայրը գարձնալ կ'առաջնայ, որ Աստուծոյ ողորմութեամբ շուտով յուսալի է, այնուհետև հնարանիք կ'առնենք այս տեղ։ Իմ հայրս կարօտով փափագմէ գորան։ Քեզ անհատատալի էր, թէ ինչպէս բարեսիրտ է նա։ Դու կը ծաւնօթանաս նորան և կը սիրես նորան, ինչպէս ես սիրումեմ նորան»։

Մի սարսափ դղրդեց Մարգարիտի սիրտը։ Նա դուրս խլեց իր անձը Ֆելիսիտէի գրկախառնութենից։ Այս նկատեց նորա խոհեմութիւնը։

«Ի՛նչ ցաւ ունիս», հարցրեց Ֆելիսիտէն հոգածութեամբ»։

«Ընդ՛նչ, անհանգիստ մի եղիր»։

«Ընդհակառակն մի՛ բան խոովեցնում քեզ։ Դու սարսափիցար։ Զգումես քեզ վատառողջ»։

«Վա՜ղ մօտ զգումեմ ինձ — առողջ, քաջառողջ։ Խօսքդ յաւէտ տար միայն, պատուական զաւակ»։

Ընդ խօսքերի վերայ յաւելացրեց մի գրկախառնութիւն։

Մի՜ամիտ աղջիկը, որ ոչինչ գուշակում չէր այն խոովութենից որ առնկոծումեր իր բնաբնակամուհու սիրտը, հաւատաց նորան և դարձեալ զուարթացաւ, ինչպէս յաւէտ։ Մարգարիտին զբաղեցնելու համար, Ֆելիսիտէն ցոյց տուեց նորան իր մեծագին զարդ ու գոհարեղէնքը որ ստացել էր իր հօրից ընծայ, աւարտելով ուսումը պանսիօնի մէջ։ Ապա բերեց նա իր նկարած բաների պահարանը և բացեց Մարգարիտի առաջև։

«Կայիր այս տեղ», ասաց նա, «այս ուսուցել է ինձ իմ եղբայրս որ մի շատ աջողակ նկարիչ է»։

Պահարանի մէջ գտանվումէին զանազան դաշտերի և ծառերի ստուերագրութիւնք. բայց նկարների մէջ կային նոյնպէս մի քանի մարդապատկերք։ Մինը գոյանից ցոյց տուեց աղջիկը ժպտմամբ և կարմրատակելով։

«Ո՞անօթի է քեզ այս երեսը», հարցրեց նա։

Մարգարիտը աչք ձգեց նորա վերայ։

«Ընդ է իմ եղբայր Լուդովիկոսը։ Նստի՞լ է նա քո առաջև, որ նկարէիր նորան»։

«Ա՛յ. ես նկարել եմ նորան յիշողութեամբ միայն. մի անկատար գործ է դա. այդպէս չէ՞»։

«Ընդհակառակն ոչ. ես գտանումեմ նորան շատ նման»։

«Կուզէ. բայց դա սառն և անկենդան է, համեմատելով իսկութեանը։ Ո՜հ, ո՛վ կարող էր նորա հեզ, սիրալից հայեացքը, նորա երկիւղած, հաւատարիմ սիրտը, որ ճառագայթվում նորա դէմքի գծագրութիւններից, պատկերացնել թղթի վերայ։ Այդպիսի ճարտարապետ չեմ ես»։

Այս ժամից յետոյ Դու ստաձը ներս մնաւ անհետակը։

«Դեռ ևս քնած է մեր հայրը», հարցրեց Գևղիսխոէն։

«Այնպէս մեղմ ու խաղաղ, ինչպէս այսօր, երբէք հանգստացել չէ։ Բժիշկ Բենօն նորա մօտ է և հսկումէ նորա ննջողութեան վերայ»։

«Ահա բարի հօր ամենը քոնը քո մօտակայութեան ազդեցութիւնն է», ասաց Գևղիսխոէն, իր բարեկամուհու ձեռը փայփայելով։ Դու երևել ես մեր մէջ իրրև բաղդ և խաղաղութիւն բերող հրեշտակ։ Բայց հրեշտակները, որ տակաւին երկրի վերայ շրջումեն, կամին նոյնպէս, ինչպէս մահկանացու մարդիկը, երևկեան հայ ուտել։ Ես իսկոյն կը հրամայեմ ընթրիք բերել։ Ապա զըսյց կը տանք մինչև քնելու ժամանակը։ Դու, անգին Մարգարիտ, այս գիշերս իմ կողքումն, իմ գրկախառնութեան մէջ կը հանգըստանաս։

Երբ որ Գուստաֆը միայնակ էր սիրելի կնամարդի հետ, միւսանգամ ստացաւ նորանից հաւաստութիւն, թէ սա մօտերումն ամենայն զօրութիւն գործ կը դնէ զարհուրեցուցիչ ցնորքները յաւիտեան փարատելու նորա հօր երեւակայութենից։

«Ես Դուք, անգին Մարգարիտ, կը մատուցանէք ձեր ձեռը իմ հօրս իրրև նշան հաշտութեան», հարցրեց Գուստաֆը։ Դուք մերժելու չէք նորա ձեռը, որ նա դնելու էր Ձեր գլխի վերայ, օրհնելով մեր ամուսնութեան դաշը»։

«Ես այն գործը որ յանձն եմ առել, կը լրացանեմ բոլորովին», պատասխանեց Մարգարիտը։ Հօր անհրաժեշտութիւնը ջնջած է նորա զաւակներին սիրով։ Ես պատրաստ եմ ամենայն յօժարութեամբ ներել նորան։ Եթէ այն ուխտը մըհժիծղրութեան, որ ես իմ անբաղդ հօր գազազի մօտ գրեցի, լրացել եմ կիսով չափ։ Թող Աստուած չգտնէ ինձ խիստ գատաստանով, որ ես չկամիմ առնել յառաջ գնալ այդ շաւղի վերայ։ Թէպէտև այդ պատճառով լինէր իմ բաժինս մի մշտնջենաւոր գատապարտութիւն, որ ես չէի համբերել մինչ ի սպառ, այնու ամենայնիւ մխիթարութեամբ էի, մտածելով, թէ բաղդաւոր էի կացուցել նորանց որ սիրելի են իմ սրտին և որոց սիրելի եմ ես այնքան ջերմութեամբ։

Գևղիսխոէն վերադարձաւ, նորա հետևից գալով մի սպասաւոր, որ բերումէր երևկեան հացը։

Պատանի մարդերը մնացին միասին պրեթէ մինչև մէջ գիշեր։ Այնուհետև Գուստաֆը հրաժարական տուեց աղջկան, որ գնայ, մի հանգստարանի վերայ հսկէ իր հօր հիւանդութեան մահճի մօտ։

«Այսօրեան երեկոյն բաղդաւոր էր», ասաց նա, մտերմաբար նայելով Մարգարիտի վերայ։ Վաղուան երեկոն ևս այսպէս կը լինի։

Ռոբբինեան օրիորդը սեղմեց նորա ձեռը։

«Եթէ Աստուած օգնական կը լինի ինձ, այո, իմ բարեկամ»։

Երիտասարդը հեռացաւ։

Երկոքին աղջկները, որ ասում էին միմեանց քոյր, ինչպես Էդուարդ չորրորդի որդիքը (Հիլդերբրանդի ձեռով շինած պատկերի մէջ) քնած էին մի մահճի մէջ, գրկախառնած միմեանց։

Երբ որ Մարգարիտը միւս առաւօտուն Ֆելիսիտէի համբուրմամբ զարթեցաւ քնից, խոստովանեց, որ նա շատ տարիներ այնպէս քաղցր քնած չէր։

Ո՜օտ ինն ժամուն, Քառրիերեան օրիորդը ունէր տակաւին մի երկար խօսակցութիւն Օրմենդեան Կուստաֆի հետ։

Ապա Մարկիզի կառքով հեռացաւ նա մի քանի ժամերով Օրմենդի ապարանքից, որ ինչպէս խոստանում էր, վերադառնայ տասն և մի ժամուն։ Նա կատարեց իւր խոստումը։ Ապարանքի սրահի պատից կախած մեծ ժամացոյցը զարկում էր տասն և մի ժամը, և ահա Մարգարիտը իմաց տուեց իւր գալուստը ծառայի բերանով։

Նոյն րոպէին գտանվում էր Ֆելիսիտէն իւր հօր մօտ։

Կուստաֆը շտապեցաւ դէպ ի Մարգարիտը։

«Լոպէն հասել է ահա», ասաց նորան Մարգարիտը։ Հոգաբարձու եղիր, իմ բարեկամ, ձեր քոյրը հեռի պահելու։ Նորան համարձակ չէ իմանալ այն բանը, որ լինելու է։ Թոյլ բժիշկը մնայ մի մօտակայ սենեկում, բայց այնքան հեռի այն սենեկից, ուր տանելու էիք ձեր հայրը, որ ոչ մի ձայն այն խօսակցութիւնից որ կատարուելու էր այդ տեղ, կարող չէր հասանել նորա ականջին»։

«Ձեր կարգադրութիւնները, անգին Մարգարիտ, կը լցուցանեմ ճշդութեամբ», պատասխանեց Կուստաֆը։

«Երբ որ այդ բոլորը լցուցած էր, նախապատրաստեցէք ձեր հայրը»։

«Կարեկցութիւն ատուծոյ շնորհը թոյլ լինի ձեր առաջարկութեան հետ»։

«Մի մեղմ գրկախառնութենից հետոյ բաժանուեցան սիրողքը»։

Մարգարիտը գնաց մի սենեակ, որ բաւական հեռի էր իւր մանուկ քոյրեր կացարանից, որ ցոյց էր տուել նորան Կուստաֆը։ Բայց սա դիմեց դէպ ի իւր հայրը։

Մարգարիտի խնդիրը կատարուեցաւ։ Որդին տարաւ իւր հայրը այն սենեկի մէջ, ուր նա յաւաքնեցաց երեկոյին տեսած էր արեւի մայր մտանելը։ Ապա հեռացրեց բժիշկը և Ֆելիսիտէն։

Ֆելիսիտէին ասաց նա.

«Ես ունիմ մեր հօր հետ առանձին խօսելու — մի կարեւոր գործի մասին։ Գնա քո սենեակը և կաց այն տեղ այնքան երկար, մինչև կը կանչեմ քեզ։ Այս տեղ խնդիրը» յաւելացրեց նա կամաց, «մեր հօր առողջութեան և կեանքի վերայ է։ Մի լինիր հետաքրքիր, այլ արա միայն ինչ որ խնդրում եմ քեզանից։

Ֆելիսիտէն նկատելով խորին ծանրութիւնը իւր եղբօր երեսի վերայ, հնազանդուեցաւ, թեպետ երկիւղածին զարկելով սիրտը։

Ընժամ Գուստաֆը միայն գտանվումէր երես առ երես իւր հօր մօտ։ Սա բռնել էր իւր սովորական տեղը լուսամուտի մօտ։

«Ո՛նչպէս ես զգում քո անձը այսօր, հայր իմ», հարցրեց որդին բըռնելով նորա ձեռը։

«Վիշերը խաղաղութեամբ անցոյց» պատասխանեց Մարկիզը։ Զարհուրելի պատկերները չէն խռովել իմ քունս։ Եթէ սարսափ չբերէր իմ վրայ այն ահաւոր գուշակութիւնը մահու, որ երբէք հրաժարվում չէ ինձանից, ասլա ասելու էի, թէ զգումեմ իմ անձը ոչ այնքան հիւանդ, ինչպէս երեկ։

«Երեմն Ձեզ գուցէ թէ կարելի էր ընդունել մի պցելութիւն»։

«Ո՛նչ պցելութիւն. գուցէ պարոն Քուրրիերը —»

«Ոչ հայր իմ»։

«Ըպա ո՞վ է, որ կամի —»

«Մի տիկին»։

«Ո՛վ է դա»։

«Ես կ'ասեմ Ձեզ նորա անունը, եթէ կը խոստանաք հանգիստ մնալ»։

«Ըստուած իմ, ինչ պիտի լսեմ»։

«Երեմն ասեմ Ձեզ. դա է —»

«Ըսա խնդայն, որդեակ իմ, մի տանջիր ինձ»։

«Դա է — գուշակող կինը»։

«Խոլոր անդամքը դողալով, վեր թռաւ տեղից Մարկիզը։

«Ըյն — այն Բուլարդ կի՞նը», — ձայն տուեց Մարկիզը։

«Ըյո՛, իմ հայր», ասաց Գուստաֆը, մեղմութեամբ յետ մղելով նորան նստարանի մէջ։

«Ըյն ուրուականը, որ հալածում է ինձ», ասաց Մարկիզը ալօտ ձայնով։

«Ոչինչ ուրուական։ Նոյն ինքն Բուլարդը անձամբ անձին։

«Նրկնայի՞ն տեսչութիւն. կարելի՞ է այդ»։

«Ա՛ երջապէս յայտնուել է ինձ որոնելով գտանել այդ կինը»։

«Ա՛ւ ինչ — ինչ կամի դա ինձանից», թոթովեց հայրը։ «Կամի՞ նա միւսանգամ անիծել ինձ»։

«Ոչ, հայր իմ. նա չէ կրում այլևս ոչինչ անէծք իւր շրթունքի վրայ։ Ո՛վ, ակնոյ դրէք խօսքիս, թող տուեցէք նորան խօսակից լինել Ձեր հետ։ Երդուեցաւ Ձեզ, Դուք ապաշաւելու չէք այդ բանի վերայ»։

«Երեմն դու արդէն խօսո՞լ ես նորա հետ»։

«Մի քանի րոպէից յառաջ»։

«Ա՛ւ — ինչ ունի նա ասելու ինձ»։

«Ա՛ս նորանից հարցրեցի այդ։ Նորա պատասխանը եղաւ». Ասացէք ձեր հօրը, որ այս անգամն չեմ բերում նորան անէծք, այլ օրհնութիւն»։

«Որհնութիւն — նա՞ — այն զարհուրելի կի՞նը»։

«Ա՛յս ինձ զարհուրելի չէ. ինձ երևել է նա հեզ և մեղմ»։

«Ո՞ւր և մե՞ղմ այն կինը, որ կործանել է իմ կեանքը, ալևոր է շինել ինձ»։

«Այն ձեռը, որ Ձեզ դեպ ի ցած է ցրտել, կարող է զարձեալ բարձրացուցանել։ Զարձեալ միանգամ թոյլ տուէք նորան երևել Ձեր առաջև»։

Մարկիզը գլուխը ցած ընկաւ կուրծքի վերայ։ Մի փոքրիկ մտախոհութենից յետոյ ասաց նա.

«Ով որ ոչինչ չունի յուսալու, նա և ոչինչ բանից չունի վախենալու։ Ես կամիմ խօսել նորա հետ. կամիմ վերահաստատ լինել նորանից, թէ ո՛վ է յայտնել նորան իմ անցած օրերի անմխիթար գաղտնիքը»։

«Ուրեմն կարող եմ ներս հրաւիրել նորան»։

«Այո՛, բայց դու մնա իմ մօտումն»։

«Ո՞անգիստ կացէք, ես կը պաշտպանեմ Ձեզ և կը հսկեմ Ձեր վերայ։ Բայց ոչինչ պաշտպանութիւն իմ կողմից հարկաւոր չէր»։

Դուստրը շտապեցաւ դեպ ի դուրս։

Մարկիզը կանգնեաւ ամրոի վերայ և աչքը լեռնից դրան վերայ։ Մօտակայ մահու մտածութիւնը ընդելացած, սպասումը թշնամին ալեկոծուած, բայց անեղկելուղ սրտով։

Ո՞վ լոպէից յետոյ կամաց բացուեցաւ դուռը դեպ ի նախադահլիճը։

Մի կանացի կերպարանք երևեցաւ շեմքի վերայ։

Մի երկար, մուգ, ուռուցաւոր հանդերձ թափվումէր գուշակող կնոջ վզից մինչև դեպ ի ոտքը։ Մի կարմիր վերարկու ծածկումէր նորա թիկունքը։ Գլխի վերայ դրած էր բացպոյն նիւթերից ոլորած փակիղ։ Ձեռնումը կրում էր խայտաճամուկ օղաւորուած կախարդական փոքրիկ գաւազանը։

Ո՞ւանդը ձգեց մի վախկոտ հայեացք դեպ ի դուռը։

«Այն կինն է», խօսեց մարկիզը քթի տակին։ Այդպէս երևեցաւ նա ինձ այն ժամանակ, երբ որ խնդարութեամբ շրջեց ուղեղս։

Մարկիզը սպասումէր այժմ նորա մօտաւորութեանը։

Գուշակող կինը կամաց կամաց փոխելով քայլերը մօտեցաւ նորան և խօսեց աղօտ ու դողդոջուն ձայնով.

«Պարոն Մարկիզ Օրմնդ. Ա՛յն Աստուածը որ մի օր ինձ խօսել տուեց դեպ ի Ձեզ, հրամայել է ինձ զարձեալ յանդիման լինել Ձեզ»։

«Արդարև այն կնոջ ձայնն է», խօսեց Մարկիզը քթի տակին. այդ ձայնը որպէս այն ժամանակ, նոյնպէս այժմ ահարկու ազդարարութեամբ հասանումէ ականջիս»։

Ապա հետև Մարկիզը գլուխ զարձուց դեպ ի նա, առանց նայելու նորա վերայ.

«Ո՛վ — ինչ կամիս դու ինձանից, կին դու». հարցրեց նա։

«Ա՛լ եր նայեցէք, պարո՛ն Մարկիզ», պատասխանեց նա։ «Ա՛յս ան-գամն իրա՛ւ պատգամատո՛ր խաղաղութեան կանգնած եմ ես Ձեր առա՛ջև»։

«Օ՜, արհա՛մարելի կին. մի՞թէ Աստուած տուել է Ձեզ կարողութիւն օրհնելու և անիծելու»։

«Ընդէ՞ր գալիս չէր երկնքից», ասաց դուշակող կինը։ «Նա բըղ-խումէր իմ յատակ, վըկայութեամբ վառուած սրտից»։

«Ո՛ր սրտի՞ց»։

«Ըյո՛, պարո՛ն Մարկիզ»։

«Ես ուզում եմ դու, ի՞նչ եմ արել քեզ։ Ո՛վ է յայտնել քեզ իմ կեան-քի խաւար գաղտնիքը»։

«Ես պիտի քաջ տեղեակ լինէի գործոյն, որովհետև ծնած եմ Օրսան-ժեան ամրոցի մէջ»։

«Օրսանժեան ամրոցի մէ՞ջ»։

«Ըյդպէս է։ Նայեցէք երեսիս, պարո՛ն Մարկիզ»։

Հրեանդը շարժեց գլուխը։

«Ես ոչ, ես վախումեմ քո թուխ, միջից ծակող աչքերից»։

«Դուք այսօր վերջ տալու չեն Ձեզ։ Դարձեալ նայեցէք իմ վերայ»։

Մարկիզն արտեւանունքը կամաց կամաց բարձրացան։ Նա յառաջու-մեր դեռ ես իր աչքը համարձակապէս ուղղել դէպ ի նա։

Գուշակող կինը մի քայլ ես աւելի մօտեցաւ նորան։

«Ըսումեն, թէ ես նման եմ իմ հօրը», ասաց նա մեզմութեամբ։

«Քո հո՞րդ։ Պու՛ էիր —»

«Ինէատրիս Օրսանժեան»։

Մարկիզը զարհուրած, լեւեռեց աչքը նորա վերայ։

«Ըյժմ, ճանաչում էք իմ հօր երեսի գծագրութիւնքը իմ երեսի մէջ» հարցրեց նա։

Ըյո՛, այո՛, թոթովեց Մարկիզը։ «Բայց այս հանդիպա՛ծը —»

«Ես գործան վոխ եմ առել սիկին Բուլարդից»։

«Իրեմն Դուք էիք այն կինը, Դո՞ւք —»

«Ըյո՛, ես էի, որ այն գիշերին առել էի գուշակող կնոջ կերպարան-քը։ Ես, անբաղդ Օրսանժի դուստրս, կարդացի Ձեր վերայ այն անէծքը»։

Մի կարճատև լռութիւն հետևեցաւ դորան։

Ըպա, այն միանգամ այնքան հզօրաց մարդը ցած գլորուեցաւ աթո-ռից դէպ ի յատակը երկու ծնկերի վերայ, խոնարհեցրեց գլուխը իւր մեր-ձած ըղձի աղբկայ առաջև և հառաչեց.

«Ըյո՛, այո՛, Դուք իրաւունք ունէիք անիծելու ինձ։ Ո՜վ, Աոէբ ին-ձանից ինչ որ իմ սեփականութիւնս է։ Դա պատկանում է Ձեզ և Ձեր ազ-գին, ես իմ զաւակներս, իրեւ չքաւոր դուրս կ'երթամ այս տնից և այ-

նու ամենայնիւ կ'օրհնեմ ձեզ — միայն մի հատ խօսք ողջմտութիւն Ձեր շրթունքից։

Ողջացող յանցաւորի թշուառ կերպարանքը, կամաւոր խոնարհութիւնը որ նա յանձն էր առել, նորա ձայնի երկիւղալից և դողդոջուն հընչիւնը ըմբռնեց և դէպ ի գութ շարժեց Մարգարիտի արդէն դէպ ի թողութիւն պատրաստ սիրտը։

«Աստուծոյ ձեռը արդէն բաւական պատուհասել է նորան», խօսում էր մի ձայն աղջկայ մէջ։ «Վերջացրէ՛ նորա զարհուրելի տանջանքը հանելով բերանիցդ բառս ի՛ս-ին»։

Աղջիկը ձգեց ձեռը, որ վեր բարձրացնէ Մարկիզին։

Լսէ՛ սա աղերսում էր, փոխանակ ըմբռնելու նորա ձեռը.

«Ո՛չ, ոչ, թող ինձ հողի մէջ քո առաջև մեռած թողութիւն»։

«Ներեմ», ասաց աղջիկը հեղ, բայց բարձրացրած ձայնով, ես հրատարակում եմ թողութիւն իմ լուսահոգի հօր անունով։ Թո՛ղ ապրէք Դուք, թող Ձեր զաւակները, բարօն Օրանժի որբերը բաղդատո՛ր տեսանէք։ Սաքա մի ժամանակ պանդխտութեան մէջ գտան մի երկրորդ բարի հայր։ Այժմ ես ասում եմ ինձ Մարգարիտ Քոլրիերեան և Լուդովիկոս Քոլրիերեանը իմ եղբայրս է։

«Իմ որդին ամենայն բան ասել է ինձ արդէն», պատասխանեց Մարկիզը։ Ես գիտէի, որ իմ զաւակներս և զաւակները այն մարդու, որոյ անունը համարձակվում եմ առանց դողալու արտասանել, սիրով կապած են միմեանց հետ»։

«Ներեմն վէճը աւարտած է արդէն», ասաց Ռէատրիսը։ Այժմ գիտէք Դուք թէ ով էր գուշակող կինը։ Ես չեմ եմ առել անէծքը, և այսուհետև տեղիք չունիք դուք վախենալու Նոյեմբերի տասերկուսից, իմ անբաղդ հօր մահուան օրից։

Փոխանակ պատասխանելու, Մարկիզը ծածկեց երեսը ձեռներով։

Ռէատրիսը մնա գնաց և մեղմով շշնջեց նորան։

«Այժմ պիտոյ է ինձ մի կարճ ժամանակով հեռանալ այս տեղից, պարո՛ն Մարկիզ։ Այս կերպարանափոխութեան մէջ ոչ ոք, բայց ի Ձեր որդուց, որին յայտնի է այս գաղտնիքը, չպիտի գտանէ ինձ այս տեղ։ Խնդրեմ, վեր կացէք»։

Ձիանդը բարձրացրեց խոնարհեցրած գլուխը։

Ռէատրիսը տեսաւ Մարկիզի դունաթափ երեսը արտասուքից հեղեղուած։

Այս էր առաջին արտասուքը որ նա արտասուել էր իւր ամբողջ մանկութեց յետոյ։ Դորա ձեռնով սպանած Օրանժի ազգին էր, որ այդ արտասուքը գուրս էր ճնշել նորա աչքից։

Մարկիզը և այժմ չջնջեց Ռէատրիսի դէպ ի նա պարզած ձեռը։

«Ես տակաւին չեմ արժանի շօշափելու քո մաքուր ձեռը», ասաց նա։ «Գնացէք, Օրիորդ Օրսանժ — Քուրքիերեան, և ուղարկեցէք ինձ իմ որդիս։ Շարհակալութիւն Չեզ Ուշ-Ի-Նո խօսքի համար որ դուք արտասանեցիք իմ վերայ։ Եթէ ես տակաւին չեմ արժանի դորան — գալոց օրերում կ'աշխատեմ արժանի դառնալ»։

Օրիորդ Քուրքիերը կարեկցութեան հայեացքով դուրս գնաց սենեկից։

Նա գտաւ Դուստաֆը նախասրահում։

Մարգարիտի կերպարանքը ասումէր նորան, որ հաշտութիւնը հնարաւորուել է։

Նա բացեց իւր գիրկը Մարգարիտի առաջև։

Մարգարիտը գրկախառնելով նորան, ասաց։

«Գնացէք, իմ աղնիւ բարեկամ, Չեր Հայրը սպասումէ Չեզ։ Նորա բերանից վերահասու կը լինէք, ինչ որ մեր մէջ անցել է։ Ո՞վ, մի քանի րոպէ յառած զգացել եմ ես ճշմարտութիւնը այն խօսքերի, որ դուք նորան ասացիք ինձ. թէ առելութիւնը սպանումէ, իսկ սէրը կեցուցանումէ։ Չեր Հայրը սկսեալ այս ժամուց կը սկսանի մի նոր կեանք»։

Դուստաֆը պինդ և մտերմաբար սեղմելով նորան կուրծքին, ձայն արձակեց.

«Ո՜վ, ես գիտէի այն, որ քո սէրը կարող է յանձն առնուլ ամենամեծ ընծայաբերութիւնը»։

Մարգարիտը մեղմով արձակեց իւր անձը նորա գրկախառնութենից։

«Դէպ ի Չեր Հայրը, Դուստաֆ. ես այժմ կ'որոնեմ Ֆելիսիտէն»։

Նա շտապեցաւ դէպ ի այն սենեակը որ յատկացրել էր նորան իւր սիրականը, և հանեց վերայից գուշակող կնոջ հանդերձը և թաքցրեց։

Դուստաֆը անյապաղ դիմեց դէպ ի իւր Հայրը։

Մարկիզը տակաւին գտանվում էր ծնկերի վերայ խոնարհած։

Որդին մեղմութեամբ նեղս մտանելով, լսեց որ Հայրը բարձրաձայն և ջերմեռանդաբար աղօթում էր։ Նա մնաց շեմքի վերայ կանգնած և սպասեց մինչև Հայրը աւարտէ իւր պաղատանքը։ Ապա հետև մօտ գնաց և իւր զօրեղ բազուկներով վեր բարձրացրեց նորան և հանգստացրեց նստարանի մէջ։

«Օրիորդ Քուրքիերը բերել է ինձ մի ուրախացուցիչ լուր», ասաց նա։

«Նա մի հրեշտակ է», պատասխանեց Մարկիզը։

«Ուրեմն ամենայն ինչ ներած ու մոռացած է, Հայր իմ»։

«Այո՛, նորա կողմից, իմ որդի։ Բայց ես կարող չեմ մոռանալ, թէ ինչպէս ծանր անիրաւութեամբ մեղանչել էի Օրսանժի ազգատոհմին։ Իմ յանցանքիս բեռը կը ծանրանայ իմ հոգու վերայ մինչև ի մահ»։

«Աշխարհս և անկեղծ զղջումը այդ բեռը կը թեթևէ Չեր վերայից»։

«Այո՛, եթէ զղջումը գործով ու արդեամբը լինի, իմ որդի»։

«Ինչպէս էր Դուք հասկանում այդ բանը»։

«Վրանի որ յաւիշտակողը պարծենում է յաւիշտակած գոյքովը, Աստուած ներելու չէ նորան»։

«Այդ պատճառով կամիմ հրաժարուիլ դորանից»։

«Ինչպիսի պիտի մեկնեմ քո խօսքը, հայր իմ»։

«Այս տունը, այս գոյքը, որ ունիմ ես, բոլորը, բոլորը պատկանում է բարձր Օրսանժի զաւակներին։ Ես կամիմ դարձուցանել նոցա իւրանց սեփականութիւնը»։

«Ո՛վ. Արէք այդ բանը, իմ հայր, արէք։ Ես յօժարութեամբ տալիս եմ իմ հաւանութիւնը այդ բանին»։

«Նայց Ձեզ կը կործանեմ աղքատութեան մէջ, իմ զաւակներ»։

«Օրիորդ Քուրքիները ծանօթացել է ինձ իբրև մի չքաւոր նկարչի և սիրումէր ինձ, միտ չդնելով իմ չքաւորութեանը։ Դա և պիտի արհամարհելու չէ Մարկիզ Օրմոնդի չքաւոր որդին։ Եւ Լուդովիկոսը սիրումէ Ֆելիսիտէին աւելի քան թէ իւր կեանքը»։

«Ես երկբայութիւն չունիմ, որ ձեր սիրտերը յաւիտեան պատկանումին միմեանց, եթէ այդպէս չլինէր, Բէատրիս Օրսանժը տեսած լինելու չէի իմ մօտ։ Բայց Դուք պիտի ունենաք ազատ ընտրութիւն։ Մեր գոյքի հանդիսաւոր պարգևատրութեան արձանագրութիւնը պիտի դեռ ևս ձեր ամուսնութենից յառաջ կատարուի, այսպէս չէ՞, իմ որդի»։

«Երեցէք ամենևին այնպէս, ինչպէս վկայումէ Ձեր սիրտը թէ արժան էր, հայր իմ։ Պարոն Քուրքիները էգուց իւր որդեդրի հետ միասին կը հասանի այս տեղ։ Դա ծանօթացած է արդէն անմխիթար դաղտնիքին։ Դուք կարող էք, եթէ Ձեր զօրութիւնքը թոյլ են տալիս, ամենը կարգի դնել նորա հետ միասին»։

«Իմ զօրութիւնս շուտով կը նորոգուի», ասաց Մարկիզը, որովհետև այս օրից ոչինչ տանջող ցնորք այլ ևս հալածելու չեն ինձ, ոչինչ ահաւոր երազներ այլ ևս անհանգիստ չեն առնելու ինձ։ Այժմ տար ինձ դէպ ի մահիճս, իմ որդի։ Ես կամիմ մի քանի ժամ հանգստանալ և յոյս ունիմ գտանել հանգիստ, որովհետև այժմ սիրտս հոգուս մէջ մի պայծառ և ամուր կամեցողութիւն։

Վոստաֆը տուեց ձեռը հօրը և առաջնորդեց նորան դէպ ի ննջարանը։

Յառաջ քան որդին հրաժարուել էր հօրից, Մարկիզը ասաց նորան։

«Այժմ կարող ես գու արձակել բժիշկը։ Եթէ նա հարկաւոր կը լինի, կը հրամայեմ կանչել նորան։ Մի այլ բժիշկ, քան թէ նա, պիտի գար, իմ հոգու հիւանդութիւնը բժշկելու»։

Նրիտասարդը կատարեց հօր պատուէրը։ Բժիշկ Բենօն դեռ ևս նոյն ժամուն հրաժարուեցաւ ապարանքից, առաստապէս վարձատրած լինելով իւր բժշկական հոգաբարձութեան համար։

Ա՛յնուհետեւ Գուստաֆը շտապեցաւ դէպ ի քունը սենեակը։

Նա գտաւ երկաքին աղջիկները մեծերմնալար խօսակցելով միմեանց հետ։

«Ես գալիս եմ մեր հօր մօտից» ասաց նա։ Մի ժամից ցգումէ նա իր անձը շատ ու շատ առողջ։ Բժիշկը արձակուած է։ Մեր Հայրը այլ ևս կատաղած չէ սորան։

Ֆելիսիտէն, ուրախ հիացմամբ կպեց ձեռները։

«Հրաշք է պատահել», ձայն արձակեց նա։

«Կարծիր, ինչ որ կամիս, սիրելի Ֆելիսիտէ. բայց եթէ կամիս, կատաղ ևս ստոգել, որ իմ ասածը ճշմարիտ է»։

«Ուրեմն կարո՞ղ եմ ես գնալ հօրս մօտ»։

«Ա՛յո, բայց դու մօտեցիր նորան կամաց, որովհետեւ, ինչպէս հաւանական է, դու կը գտանես նորան քնի մէջ»։

«Ես ոչ ոք չկայ նորա մօտ»։

«Մի սպասաւոր միայն, որ մեռնէ նախասենեկում»։

«Ո՜վ, իմ Աստուած, այս ինչ ուրախութիւն է։ Ա՛յժ կամիմ ես խաղայն պիտի նորա մօտ։ Մխամիտ կացէք. եթէ քնած է—չեմ շփոթեցրու նորա քունը։ Կամաց որպէս մի փոքրիկ կատու, ներս կը սողամ ևս»։

Ա՛յս խօսքերը բերանում, դուրս թռաւ նա դռնից։

Երբ որ Ֆելիսիտէն կանգնած էր հօր անկողնի մօտ, նկատեց որ իւր եղբայրը ճշմարիտ էր ասել։ Մարկիզը հանգստացած էր փակած աչքերով և շնչումէր խոր և մեղմ կերպով։

Նա թեքուեցաւ հօր վերայ և փշեց մի համբոյր նորա ճակատի վերայ։ Ապա կպեց ձեռները և շնորհակալութեամբ դէպ ի վեր նայեցաւ։

«Դու երկնաւոր Հայր», շշնջեց նա, Դու ամենայն բան առաջնորդել ես դէպ ի բարին։ Իմ Հայրս կ'առողջանայ և իւրայիններդի մէջ, որ այնպիսի քնքուշ սիրով սիրու մեն նորան, տակաւին շատ տարիներ կը վայելէ մի անխռով բաղդաւորութիւն։

Տակաւին նոյն առաւստուն օրիորդ Քուրքիները ուղարկեց մի ձիաւոր լուտար դէպ ի Վենեան։

Մի‌ւս օրին դադարեցաւ մի կառք Օրմոնդի ապարանքի առաջև,

Մի ալևոր պարոն և մի ծադկատիեզին պատանի դուրս եկան կառքից։ Դոքա էին պարոն Քուրքիները և Լուդովիկոսը որի երեսը փայլում էր բաղդաւորութենից և ուրախութենից։

Գուստաֆը ընդունեց երկուսին դարպասի մօտ և իսկոյն տարաւ նոքանց Մարգարիտի և Ֆելիսիտէի մօտ։

Ալևորը, սիրտը շարժած զգլխատունեց ջերմութեամբ իւր սրդեգրած զաւակը։

«Ա՛յժմ հաճ և հաւանի էք ինձ, Հայր իմ», հարցրեց զաւակը։

«Պատարեզապէս, իմ զաւակ։ Աստուած թողեց քեզ գտանել ուղիղ ճանապարհը, մեր ամենեցուն խաղաղութեան համար։ Այսուհետև այդ ճանապարհից երբէք դուրս գալու չես դու»։

Վռաստաֆը խնդրեց իւր հանդերձեալ (գալոց) աներից մնալ կանանց ընկերութեան մէջ, և ինքը գնաց դէպ ի հօր սենեակը։

Մարկիզի զօրութիւնքը սկսեալ այն ժամից, երբ նա առաջին անգամը խօսել էր Բէատրիս Օրսանժի հետ, այնպէս նորոգուել էին, որ նա կարող էր առանց օտարի օգնականութեան վեր ի վայր մանգալ սենեկի մէջ։

«Ի՛նչ լուր ես բերում ինձ, որդի»», հարցրեց հայրը, մատուցանելով նորան ձեռը։

Վռաստաֆը խնայց տուեց նորան պարոն Քուրբիների և նորա որդու գալուստը։

Մարկիզը մի քանի րոպէ ծանրութեամբ նայեցաւ իւր առաջև, յետոյ ասաց նա.

«Պատպէս պիտի լինի։ Ես պատրաստ եմ ընդունելու պարոն Քուրբիները։ Այս ժամը, մինչև Աստուած յետ կը պահանջէ իմ հոգիս, կը լինի ամենածանր ժամը իմ այժմեան կեանքիս։ Բայց ես զօրութիւն կը գտանեմ համբերելու դորան»։

Որդին կամէր դեռ ևս պատասխանել մի բան, բայց Մարկիզը յառաջեց։

«Գնա, իմ որդի և միամիտ կաց իմ մասին։ Մտաբերիր, որ երկնային տեսչութիւնը յաջողութեամբ օգնական է ինձ իմ առաջարկութեան մէջ»։

Մի քառորդ ժամ յետոյ, Քուրբիներ և Օրմօնդ պարոնները երես առ երես կանգնած էին միմեանց մօտ։

Առաջին ողջունատուութիւնքը եղած, Մարկիզը փակեց դուռը։ Նոցա մէջ սկսաւ մի խօսակցութիւն տևելով այն մինչև մի ժամ։

Այս կանչեց Մարկիզը մի սպասաւոր և հրամայեց նորան բերել մի նոտարիուս։

Երբ որ սա եկել էր, երկոքին աշխուժականքը գարձեալ փակուեցան սենեկի մէջ։

Մի քանի ժամ յետոյ նոտարիուսը հեռացաւ ապարանքից։ Մարկիզը կանչել տուեց իւր որդին, մանանայով արեց սեղանի վերայ դրած արձանագրութիւնը և ասաց.

«Կարդա, իմ որդի, և ապա արա, ինչ որ դու բարի և արդար կը համարես»։

Վռաստաֆը վազելով կարդաց գրուածի լսմանդակութիւնը, առաւ գրիչը և ստորագրեց։ Ապա սիրտը շարժուած համբուրեց հօր ձեռը։

«Փառք Աստուծոյ, գործը կատարեալ է» ասաց սա։ Մի ծանր բեռն վեր է կալած սրտիս վերայից։

Պարոն Քուրբիները, որոյ աչքերը լցուել էին արտասուքով, մատուց նորան ձեռը։

Դուք յաղթել էք ինքներդ Ձեղ, պարոն Մարկիզ։ Երկնային արդարութիւնը Ձեղ անվարձ թողնելու չէ։

Մի տրտում ժպտումն երևեցաւ Մարկիզի երեսի վերայ։ Մի նեղքին ձայն ասումէր, թէ իւր յանցանքը ամենևին քաւելու համար, մնումէ դեռ ևս մի բան։

Նոյն իսկ օրին պարոն Քուրբիները յայտնեց իւր որդեպրած գաւակներին, թէ նոքա Մարկիզ Օրմենդի հրաժարական արձանագրութեամբ դարձեալ ստացել էին իւրեանց հայրենական գոյքը։

«Դա է այժմ Ձեր օրինաւոր սեփականութիւնը», ասաց նա։ Դուք կարող է գործ դնել դորան, որպես հաճոյ էր Ձեզ»։

«Ես կը բաժանեմ այդ գոյքը Ֆելիսիտեի հետ, իմ գալոց ամուսնակցի հետ», ձայն տուեց Լուդովիկոսը։ «Ինչ որ պատկանումէ ինձ, է ապաքէն և նորա սեփականութիւնը»։

«Ես ևս տալիս եմ իմ հարստութիւնը այն տղամարդին, որ ես Լաննոյ նկարչի անունով սիրումեի քնքշութեամբ», պատասխանեց օրիորդ Քուրբիները։ Այնուհետև դառնալու է նա տէր իմ բոլոր գոյքի վերայ»։

Երբ որ երկու սիրող զոյգերը միաւորուել էին, ժամադրութեան նշանագրութիւնը մի ամիս միջոցից յետոյ։

Այս միջոցումն Մարկիզը վերստին ստացաւ իւր առաջին զօրութիւնը։ Միայն թէ նորա երեսը մնաց գունաթափ և տրտում, ինչպէս յառաջ։

Նշանագրութեան օրին յանկարծ անյայտացաւ նա ապարանքից, երբ որ արդէն յառաջուց ունեցել էր մի երկրորդ խօսակցութիւն պարոն Քուրբիների հետ։ Սա յանձնեց Գուստաֆին մի նամակ, որ նորա հայրը յետ էր թողել որդու համար։

Այդ նամակի բովանդակութիւնը այսպէս էր.

ԻՄ ԱԶՆԻՒ, ՋԵՐՄՈՒԹԵԱՄԲ ՍԻՐԱԾ ՈՐԴԻ.

Երբ որ դու կը կարդաս այս տողերը, ես արդէն մի քանի մղոն հեռացած էի փարիզից։ Հարց ու խնդիր մի արա, թէ ուր եմ երթում ես։ Դու այնու ամենայնիւ կարող չէիր վերահասու լինել այդ բանին։ Ես յոյս ունիմ քեզ և իմ Ֆելիսիտեն դարձեալ տեսանել—իմ մնահուան ժամուն, որ այսուհետև շատ հեռի չէ լինելոյ։ Մի բարկանար իմ վերայ, որ ես Ձեր նշանագրութենից և պսակից յառաջ անհետանումեմ Ձեր աչքից։ Բայց սովորութիւնը կը պահանջէր, որ ես իմ ձեռքս օրհնելով դնեի ձեր գլխի վերայ, և ինձ համարձակ չէ լցուցանել այս սուրբ ծէսը. պատճառ, իմ օրհնութիւնս ոչինչ բարդաւորութիւն բերելու չէր Ձեր ամուսնութեանը։ Սակայն կամիմ ես այն պատասխանատու, ուր ես շուտով ոտք կը կոխեմ, որ

պէլ ևս չհրաժարուէի այն տեղից — սա մի սուրբ տեղ է, իմ որդի — մախ-
թել Ձեր ղեւգաւորութեան վերայ Աստուծոյ և Ձեր պայծառակերպած մեր
օրհնութիւնը։ Փարիզուհին պատուարժան պարոն Քուրքիերը կը փոխանորդէ
իմ տեղս։ Ֆելիսիտէն, որ իւր հայրը համարում ամենապատուականը մար-
դերի մէջ, այո՛ երկար կ'արտասուէր իմ վերայ։ Բայց նա իւր գալոց ամուս-
նակցի սիրոյ և իւր եղբօր ու ազնիւ քուեր քնքշութեան մէջ կը գտանէ վեր-
ջապէս մխիթարութիւն. նա կը յաղթէ անջատման ցաւին և ապա կը վա-
րէ նոյնքան ևս բաղդաւոր կեանք, ինչպէս տիկին Օրսանժը, քանի որ քո
հօր ձեռը ամբարշտութեամբ չէր կործանել նորա բաղդաւորութիւնը։ Դար-
ձեալ, իմ ազնիւ որդի, բարեւ՛ մնաս, մինչև վերստին կը տեսանես ինձ իմ
մահու մահճի մօտ։ Այն ժամանակ կամէի ես դարձեալ լսել բառս ներ-
քո ազնիւ ամուսնակցի բերանից։

Քո հայր

Բեռնարդ Օրմոնդ։

Վաստաֆը կարդաց այս նամակը խորին դղրդմամբ սրտի։ Բայց նա
պատուից իւր հօր ամուր որոշած կամքը և ոչինչ հարցուխնդիր չարեց նորա
կացարանի մասին։ Նորա մտերիմ դուստր Ֆելիսիտէն անմխիթար էր իւր
հօր փախստեան վերայ և յանձն առաւ նշանադրութիւնը միւս օրին, տեղի
տալով միայն իւր սիրածի և իւր եղբօր ստիպեցուցիչ խնդրանքին։ Նշանա-
դրութիւնը կատարուեցաւ գերդաստանի նեղ շրջանի մէջ և նման էր աւելի
մի տրտում տօնախմբութեան, քան թէ մի բաղդաւոր անցքի։ Շատ օրեր
ղէնի իւր ամուսնութեան Լուդովիկոս Քուրքիերի հետ, որ մի տարի յետոյ,
նոյն միջոցին երբ լինում էր Վաստաֆի և Մարգարիտի ամուսնութիւնը, կա-
տարուեցաւ, պիտի անցանէին, մինչև ցամաքեցան Ֆելիսիտէի արտասուքը
իւր կորուսած հօր վերայ։ Թէ ինչո՛ւ իւր հայրը հրաժարելով իւր ընտա-
նիքից, աւանձնացել էր մի անյայտ տեղում, մնաց նորա համար մի գաղտ-
նիք, որ երբէք աշխատում չէր նա հետաքննել, ըստ որում Վաստաֆը հօր
անունով այդ բանը արդելել էր նորան։ Մարկիզ Օրմոնդի և բարօն Օր-
սանժի զաւակների ամուսնութիւնը եղաւ այնպէս բաղդաւոր, ինչպէս թոյլ
է տալիս անկատար կացութիւնը այս երկրաւոր աշխարհում։

Վ՚ից տարի յետոյ, մեր պատմութեան վերջում յիշած անձինքը կան-
գնած էին մի հին անդացած արեւգալի մահուան մահճի մօտ, հարիւր մղոն փա-
րիզից հեռաւոր մենաստանի մէջ, որոյ կրօնաւորութեան կանոնքը պատկա-
նում էին ամենախիստ կրօնաւորական կարգերին Ֆրանսիայի մէջ։

Դա էր ապաշխարող Մարկիզ Օրմոնդը, որոյ աչքերը վակեց սիրոյ ձեռը։

Ա. Նալբեանդ։

# ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

## Թէ ինչպէս է յառաջադիմութիւնը կաթոլիկեան բեմբրմի Իտալիայի մէջ։

## (PROGRÈS DE LA RÉFORME CATHOLIQUE EN ITALIE.)

Revue britannique 1862. 3-e livraison.

(Շարունակութիւն և վերջ.)

Ընդունել մեծակշիռ խնդիրը մի դաշնագրութեան եկեղեցւոյ և իտալական կառավարութեան մէջ այն է, որ սեփականութիւ Պապին մի ազատութիւն ամենայն քաղաքական վերակացութիւններից, որ անհրաժեշտ հարկաւոր է նորան, եթէ նա պիտի պահպանէր մի կաթոլիկեան քահանայապետի յատկացուցիչ նշան և չընկնէր իտալական եկեղեցւոյ ծայրագոյն արքեպիսկոպոսի ստորին կացութեան մէջ։ Ոչ մի կարգադրութիւն, որով խորհուրդը լինելու էր պատուել այս կրկնապատիկ բնութիւնը որ զուգակից է Պապի անձնաւորութեան մէջ, կարող չէ լինել տեւողական. որովհետև, թէև առաջին հայեացքով կարող էր երևել արդար ու բնական, քահանայապետ իշխանի մանաւանդ օգուտները թողուլ հոգևարձութեանը կաթոլիկների որ խոստովանութեան նորա հոգևոր իշխանութիւնը. բայց այս բանը կարող էր միայն վերաբերութիւ դէպ ի նորա հաստոյքը որ լինելու էին այնքան, որչափ նոցա աղնուականութիւնը պատշաճ կը համարէր, որ և ոչինչ իշխանութիւն կարող չէր կողոպտել նորանից, եթէ չկամէր սեփականել գործոյ արքունի գանձատանը. Բայց եթէ գործով արդիւնակատար պիտի լինէին իրաւունքը որ անբաժանելի կապակից են մի կաթոլիկեան քահանայապետութեան իշխանութեան հետ, ապա հարկաւոր է, հայեցմամբ դէպ ի օտար աշխարհները, մի ազատութիւն գործելու, որ անմիարանելի է մի մանաւանդ տէրութեան հպատակի կացութեան հետ։ Անփախչելի հետևանքը մի այդպիսի անազատութեան լինելու էր այն, որ Պապը չէր պիտի համարուելու օտար երկրների զղջերի կողմից ծայրագոյն գլուխ մի ընդհանուր կարգադրութեան, այլ դառնալու էր ամենեին պարզաբար ծայրագոյն արքեպիսկոպոս մի հատ աշխարհի. այս տեղ է ուհա մի դլխաւոր դժուարութիւն, Որան խոստովա-

նել են ամենեքեան որ քննութեան տակ էին ձգել այս նիւթը և պաշտպանողքը աւանդութենական հիմնարկութեան բարձրաձայն հրատարակել են, թէ խնդիրը պահպանելու պապութեան կաթոլիկ բնութիւնը առանց աշխարհական իշխանութեան, մեռեալ անկարելի։ Սակայն շարժառիթքը որ նոքա ընդդիմադրումն, հանդիպել են ներհակ առաջարկութիւնների որ այո՛ արժանի են մի ծանր ուշադրութեան։ Ապացուցած է, թէ Պապը ոչինչ կորուսանելու չէր, եթէ նա փոխանակեր իւր այժմեան իշխանութեան թոյլ— կարելի է ասել նախատական — անազատութիւնը մի հանդիսաբար խոստովանուած իրաւունքի հետ վայելելու իշխանական ապահարկութիւնք թէ ինքը յատկապէս և թէ սուրբ միաբանութեան անդամները, իբրև իշխանք կաթոլիկութեան և նորա առանձին խորհրդականք։ Ա՛յնուհետև Պապը կարողանալու էր ներգործել իւր իշխանութեամբ իբրև կաթոլիկեան քահանայապետ, առանց հանդիպելու ստիպողական հակառակութեան, այն կառավարութեան կողմից, որոյ հետ ունի առաւել մերձաւորութիւնք։ Ա՛յս կառավարութիւնը հրաժարուելու էր իշխանութենից ընդհատելու Պապի թղթակցութիւնքը Իտալիայից դուրս գտանուած եպիսկոպոսների հետ, կամ թէ հակելու նորա յարակցութիւնների վերայ կաթոլիկեան աշխարհի հետ, որոյ հետ անխափան պահպանելու էր հաղորդակցութիւնք, ինչպէս մինչև այժմ արել է, միջնորդով նուիրակների որ կրելու էին մի և նոյն նուիրական արժանաւորութիւն և վայելելու էին մի և նոյն արտօնութիւնը իբրև սուրբ աթոռի գործակալք։ Մի այդպիսի յանձնառութիւն իտալական կառավարութեան կողմից, երաշխաւորելով Պապի անձի անպրժելի ապահովութիւնը և սեփականելով նորան բոլոր արտօնութիւնքը մի իշխանական կացութեան, կարող էր հանդստացնել սիրտը հռոմէական կաթոլիկ ազգերի որ երկիւղ ունին, մի գուցէ քահանայապետը դառնար կախ մի քաղաքական կարողութենից որ օրէ օր աճումէր և զօրանումէր։ Նա գործ էր դնելու բոլոր իրաւունքը պապութեան աւելի ազատապէս, քան թէ կարող էր գործ դնել, քանի որ նա ստիպուած էր որոնել օտարականների օգնութիւնը և պաշտպանութիւնը, մի գուցէնի մեծութիւն ոաքի վերայ պահելու։ Սակայն, անպատճառ հարկաւոր էր այլ ևս սեփականել նորան այնքան ևկամուտք, որ նորան բոլորովին անկախ կացուցաներ իւր կարող դրացիների բարի կամքից և երաշխաւորէր նորա ամենևին ազատ ներգործութիւնը կրօնական նիւթերի մասին։ Միակ ճանապարհը հասանելու այդ նպատակին, լինելու էր, երևումէ մեզ, սահմանել և որոշել մի հասոյթ, թողնելով նորան տնտեսել այդ հասոյթը ազատապէս։ Ա՛յս հասոյթը կարող էր լինել կալուածք թէ իտալական հողի վերայ և թէ իտալական կիսակղզւոց դուրս, կամ թէ որ և իցէ այլ տեսակ գոյք որ նորան հաճոյ կը լինէր ընտրել, երկրի կառավարութիւնը չունելով ոչինչ կարողութիւն սահմանափակելու նորա ընտրութիւնը։ Եթէ Պապը նախապատիւ կը համարէր ունենալ հողեր Իտալիայի մէջ, նո-

*բա սեփականութիւնքը կարող էին նոյնպէս ազատ լինել ամենայն քաղաքական հարկից, որպէս պատիւ որ ցուցանելումէր նորա իշխանական արտօնութիւններին։ Եթէ մեք մտածումենք Հռոմի պալատի կալուածների անհատատ կացութիւնը, սկսեալ մի քանի տարուց, դժուար էր տեղիք չտալ կարծիքի, թէ մի այդպիսի վեհանձն կարգադրութիւն, որ և կը պահուէր հաւատարմութեամբ, լինելու էր անհամեմատ աւելի պատուաւոր սուրբ աթոռի արժանաւորութեան և ազատութեան համար, քան թէ մի օտարերկրեայ պահակապան զօրք։*

*Մ՚եք հասել ենք այն խնդրին որ նոյնքան մեծակշիռ է գիտել, թէ ինչպէս կարելի էր կանոնաւորել յարակցութիւնքը ի մէջ իտալական կառավարութեան և Պապի, իբրև կաթոլիկեան եկեղեցւոյ մեծաւորի, Իտալիայի մէջ։ Պարզ ու բացայայտ է, որ ոչ մի կառավարութիւն, որ պատրաստ էր խոստովանել իբրև պատկանելի Պապին մի այնքան անկախ կացութիւն օտար երկրում որպէս քահանայապետ հռոմէական կաթոլիկ եկեղեցւոյ, կարող չէր գոյն բանը յետ պահել նորանից իւր յատուկ իշխանութեան սահմաններում, առանց ընկնելու մի հակառակախօսութեան մէջ որ անկարելի էր կացուցանելու որ և իցէ համաձայնութիւն երկու կողմերի մէջ։ Այն րոպէից, երբ որ իտալական կառավարութիւնը ընդունեց Պապի իրաւունքը և անկախութիւնը օտար տէրութիւնների հետ միասին, այնուհետև հարկ է դրվում նորա վերայ խոստովանել իւր աշխարհի մէջ նորա նոյնքան իսկ անկախ կացութիւնը։ Մի խօսքով, մի պլխովին բաժանութիւն Եկեղեցւոյ և Տէրութեան մէջ լինելու է անհրաժեշտ հարկաւոր ամենայն բանի մէջ որ վերաբերվում տէրութեան իշխանութեանը Եկեղեցւոյ գործերի վերայ։ Մի այդպիսի անցք տեղիք կը տար մի խորհրդաւոր յեղափոխութեան կարգերի։ Տէրութիւնը ստիպուած կը լինի հրաժարուիլ իրաւունքից հաստատելու Հռոմից ուղարկած թուղթերը, մինչև դոքա հրապարակուած չէին, և մանաւանդ լինելու եպիսկոպոսների կարգմանը պաշտօնի մէջ. նա թոյլ կը տայ եկեղեցական-ներին միայն բացարձակ կառավարութիւնը եկեղեցական գործերի և համարձակ կը ոչնչացնէ զանազան դաշնագրութիւնքը սուրբ աթոռի հետ, որ մինչև այսօր որոշել են քահանայապետական արտօնութիւնների սահմանքը։ Առանց այս լիակատար ազատաշնորհութեան, Պապութիւնը կարող չէր համարել իւր անձը իւր ներքին կացութեան մէջ տէր այս ազատութեան, որ և վերոյիշեալ սահմանափակող պայմանքը այնու ամենայնիւ իրաւունք կը տային նորան պահանջելու դրսումը։ Կարելի էր նոյնպէս պահանջել նոյն ազատութեան արտօնութիւնքը, թէև դոքա ենթարկուած էին տէրութեան սովորական հարկերին, հոգևորների գոյքի և եկամուտների համար [1])։*

---

[1]) Հաւքսապրութեան արժանի բան է նկատել, որ մի այնպիսի սուրբ կաթոլիկեան

Հ՚ատ սակաւ, անկողմնաւոր անձինք յապաղելու էին ասել իւրեանց մէջ, թէ նմանապիսի պայմաններով Եկեղեցին, ի վնաս Տէրութեան, հաստանելու էր մի աստիճանի երկիւղալից կարողութեան, որ անմիաբանելի էր քաղաքական իշխանութեան հետ։ Եկեղեցական իշխանութիւնը, ազատ լինելով տէրութեան օրէնքի վերակացութենից, կամ թէ աշխարհական մեծաւորների իշխանութենից, շատ հակամիտուած է ընկնելու հալածասիրութեան մէջ։ Բայց, թողունք այդ անյարմարութիւնքը, որ ուրանալ կարելի չէ, հայր Պասալիան բերից Տուրինից առաջարկութիւնք որ հիմնած էին այս պայմանների վերայ։ Մեք գիտենք, որ այդ պայմանքը մերժուեցան և վերջացան ոչինչ պտղաբերութեամբ։ Բայց մի անյաջող փորձ մի դիպուածում, կարող է վերստին նորոգուիլ մի այլ դիպուածում, մանաւանդ երբ որ այն քաղաքագիտութիւնը որ յառաջացուցել էր այլ այդ փորձը, դեռ ևս կենդանի է։ Այսպէս եղաւ դիպուածը. 1861 թուականի մարտի 26 ին, երբ որ ամենայն յոյս կտրել էին, թէ Պապը մի բարեմիտ ունկն կը մատուցանէ այս առաջարկութիւններին, կոմս Կավուրը իտալական խորհրդարանի մէջ ասաց այն նշանաւոր ճառը որոյ մէջ դարձեալ հաւաստի կացուց Հանդիսաբար իւր դիտաւորութիւնքը սուրբ աթոռի մասին։ Այս հրապարակական բացախօսութիւնը ուղղած էր Իտալիայի և Եւրոպայի վերայ, այն ակներև խորհրդով, որ դա լսուի և նկատուի իբրև մի մեծակշիռ և անգառնալի դատաւճիռ։

«Մեր սիրտը վկայում է, ասում այս տէրութենական մարդը, որ իշխանական քահանայապետի անկախութիւնը և արժանաւորութիւնը, որպէս և եկեղեցու անկախութիւնը կ՚ապահովուին բաժանելով միմեանցից այդ երկու իշխանութիւնքը և ընդարձակապէս գործ դնելով ազատութեան հիմնականը քաղաքական և կրօնական ընկերութիւնների միմեանց հետ ունեցած յարակցութիւնների մէջ։ Ակնյայտնի է, որ այս բաժանումը կարող էր կատարուիլ պարզ, որոշ և անփոփոխելի կերպով. որ, եթէ եկեղեցու ազատութիւնը հաստատուէր այսպէս, այնուհետև Պապի ազատութիւնը հաստատուելու էր շատ աւելի ամուր հիմքի վերայ քան թէ այժմեայս. նորա իշխանութիւնը լինելու էր նոյնպէս աւելի ազդող, այլ ևս չլինելով կաշկանդուած այն բոլոր դաշնաւորութեամբք և պայմանադրութեամբք սուրբ աթոռի հետ, որ եղած են և կը լինին միշտ անհրաժեշտ հարկաւոր, քանի

---

առաջնորդ, որպիսի Ֆենելոնն էր, խոստովանութեամբ եկեղեցու կառավարութեան մասին կարծիք, գրեթէ ամենևին նման այն կարծիքին, որ մեք վերևում յայտնեցինք, և թէ նա դիտաւորութիւն ունէր ազդել դորանց իւր արքայական սանի վերայ; Բուրգոյնեան դուքսի վերայ։ Ֆենելոնը իւր գրուածի մէջ մակագրութեամբ «Nature du pouvoir spirituel» հոգևոր իշխանութեան բուն յատկութիւնը, օրինակ է բերում նաև և յառաջնախնական եկեղեցին Կոնստանտինոսից յառաջ, պրօտեստանտեան եկեղեցին Գրանսիայի մէջ և կաթոլիկեան եկեղեցին Հոլլանդիայում։

*որ Պապը պահպանելու էր մի աշխարհական իշխանութիւն... Բայց ի՛նչ պէս լինելու էր, եթէ նոյնքան ևս եկեղեցու, որքան Իտալիայի համար ողբալի հանգամանքով Պապը ցուցանէր իւր անձը անողոքելի և հաստատապէս մերժելով ամենայն առաջարկութիւն։ Եւ այն ժամանակ, պարոններ, մեք քարոզելու էինք բարձրաձայն նոյն հիմնական կանոնները. մեք նոյնպէս հաստատապէս հրատարակելու էինք որ, բարի մեկնութիւնը եղաւ թէ չեղաւ յառաջընթաց, իբրև տիրապետողք ներս կը մտանենք յաւիտենական քաղաքի մէջ։ Իտալիան հրատարակելով Պապի աշխարհական իշխանութեան կորուստը, իսկոյն կ'ազատէ եկեղեցին Տէրութենից և կ'ապահովէ նորա ազատութիւնը ամուր հիմքերի վերայ»։*

*Նկարելի է, որ մի հրատարակութիւն լիներ սոյանից աւելի ճիշդ ու որոշ. անկարելի է չզարմանալ այն հորիզոնի վերայ որ այս պայծառ խօսքերը բացումն մեր աչքի առաջև։ Այնու ամենայնիւ մեք համարձակվում ենք շատ մեծայոյս լինել, թէ Պապը կը կամենար տալ իւր հաւանութիւնը մի այդպիսի մեծախորհուրդ յեղափոխութեան կարգերի մէջ։ Դիցուք թէ Հռոմի պալատը այժմ աւելի բարւոք տրամադրուած էր քան թէ անցած օրերում և խոստովանութեր ինքն, որ ստանալու էր անհամեմատ առաւել բարոյական աղդողութիւն, եթէ փոխանակէր իւր կարծեցեալ ինքնիշխանութիւնը մի ճշմարիտ ազատութեան հետ կրօնական գործերի մէջ, այնու ամենայնիւ կարելի չէ մոռանալ գժուարին խնդիրները որ պիտի տեղիք տան ջերմ բանախօսութիւնների եկեղեցու և Տէրութեան մէջ, այն փոխադարձ իրաւունքի մասին, որ նորա ընծայութեին միմեանց։ Զոր օրինակ, թեպէտ Տէրութիւնը պատրաստ էր թոյլ տալ, որ եկեղեցին կարող էր ամենայն արդարութեամբ ունենալ ազատ գոյք, բայց հաւաստի է, որ միտ դնելով այն անցքերն, որ նորութեամբ անցել է մենաստանների գոյքի մասին, նա տիպագին պահանջելու է որ եկեղեցու եկամուտքի գումարը որոշուի վճռապէս։ Այս ամենևին բնական է մի աշխարհում, ուր եկեղեցական բաժինքը հասել են պլանդակ մեծութեան, ուր գտանվումեն հոգևորներ որոց կացութիւնը այնպէս հեշտ կարողութիւն է տալիս նոցա յառաջացնել պարգևատրութիւնք երկիւղած կտակներով. բայց չկայ ոչինչ պատճառ ենթադրելու թէ Հռոմի պալատը յանձն կ'առնուր ընդունել նմանապիսի առաջարկութիւնների արդարութիւնը։ Այլ մանաւանդ, եթէ կամէինք դատել միտ դնելով այն բանին թէ ինչպէս նա մինչև այժմ վարուել է, նա պարտաւորելու էր մի այդպիսի օրէնք վերացուցման իբրև բռնութիւն քրիստոնէական սիրոյ վերայ։ Մեք երկիւղ ունինք նոյնպէս, մի գուցէ Հռոմի պալատը ընդդիմադրէ (դէմ դնէ) անյաղթելի արգելք այն սահմանափակութիւններին, որ, ինչպէս հաւանական է, տէրութիւնը կը կամենար առնել, որոշելով թիւը և անուանակոչութիւնքը այն կրօնաւոր հիմնարկութիւնների, որ նա ունէր խոստովանելու։ Ի հարկէ տէրութիւնը կարող չէր ձեռնարկել սահմանափակելու*

մասնաւոր ընկերաժողովման իրաւունքը, ուրեմն և եկեղեցականք ունէին կարողութիւն կազմելու այնքան ընկերաժողովներ, որքան հաճոյ է նոցա, միայն թէ նոցա կանոնադրութիւնքը չլինէին հնաստակար աշխարհի օրէնքին։

Այսպէս էր լինելու բնական հետեւանքը հրատարակելու եկեղեցւոյ ազատութիւնը և այսպէս է կացութիւնը կաթոլիկեան հիմնարկութիւնների Անգլիայում, ուր օրէնքը թէպէտ և չէ խոստովանում նորանց իբրև սահմանադրած միաբանութիւնք, բայց թոյլ է տալիս ամենեցուն մի կատարեալ ազատութիւն ձեւաւորուիլ որպէս ընկերութիւնք։ Այս կարգը, անստգիւտ դատաւորների վկայութեամբ, պղաբեր է գտանուել, և ամենաջերմեռանդ հռոմէական կաթոլիկները համարձակ հրատարակել են, թէ, ինչ որ պատկանումը գործական կեանքին, իւրեանց եկեղեցին չէ ոչ մի այլ տեղ այնպիսի ծաղկեալ որպիսութեան մէջ։ Բայց դժուար կը լինէր — երկիւղ ունինք մէք — ստանալ Հռոմի պալատի հաւանութիւնը մի կարգադրութեան, որ տէրութեան հրապարակաբար հաստատութիւնը պիտի յետ պահէր շատ կրօնական հասարակութիւններից։ Պատճառ, միտ դնելով այն մեծ բազմութեանը որին հասել է դոցա թիւը Իտալիայի մէջ և այն առանձին տհաճութեանը ժողովրդի մէջ, որ յարուցանումեն մի քանի կրօնաւոր կարգեր, անհրաժեշտ հարկաւոր էր իտալական կառավարութեանը ճշդութեամբ որոշել այն կրօնաւոր հասարակութիւնքը որոց կարող էր շնորհել մի օրինաւոր սահմանադրութեան վերայ հիմնած արտօնութիւն։

Նոյս աւելի դժուար լինելու էր համաձայնութիւնը եկեղեցւոյ և տէրութեան մէջ այն փոխադարձ իրաւունքի մասին, որ իւրաքանչիւրը դոցանից ընծայում է իւրեան, դատարակութեան գործի մէջ և մասնաւորապէս Ամուսնութեան կարգի վերայ։ Պապութիւնը անիրաւաբար միշտ սեփականել է իւրեան մի դատաւորական իրաւունք և մի կամահաճոյ վերակացութիւն, որ և գնալով գնալով հասուցել է պահանջելու, որ ինքը միայն լինէր իշխան ամենայն դատարակութեան վերայ, պատճառ բերելով թէ նա ստացել է Աստուածներից արտօնութիւնը քարոզելու Աւետարանը բոլոր ազգերին։ Այս պահանջողութիւնը, անթեքելի ոտքի վերայ պահուելով, մնալու էր անմիաբանելի աշխարհական ուսումնարանների որ և իցէ կարգի հետ և դորանից պիտի յառաջանար մի հինօրեայ, նեղ ու փակ և վայր ի վերոյ դատարակութիւն որ ստանումեն աշակերտքը եկեղեցական տէրութեան սեմինարիոնների մէջ։ Մի տէրութիւն, որ հիմնած է մի սահմանադրական (կոնստիտուցիոնական) կառավարութեան ազատ հիմնականների վերայ, ի հարկէ կարող չէր թոյլ տալ, որ իւր հպատակների դատարակութիւնը դառնար այս մտքով մի գործ պատկանելի եկեղեցական արտօնութեան, գործերի այժմեան կացութեան մէջ, այլև միա դնելով իտալական հասարակութեան այժմեան ընթացութեանը, մի այդպիսի, հոգևորներին միայն պատկանաւոր խնամակալութեան գաղափարը է մի գաղափար

ամենևին դուրս խնդիրների կարգից. սակայն Հռոմի պալատի կամակորութիւնը թոյլ չէ տալիս յուսալու թէ նա երբ և իցէ յանձն կ'առնուր վերջացնել այս դժուարութիւնը, այնպէս որ այսուհետև փակուէին որ և իցէ վէճի առաջք։ Բայց բոլոր խնդիրների մէջ այն, որ կը յարուցանէ առաւել շատ ընդդիմութիւնք, առանց հակառակութեան, է Ամուսնութեան կարգը։ Նա հանդիպելու է շատ դժուարութիւնների սուրբ աթոռի կողմից, մինչև կը ստանար մի վճիռ, որ համաձայն լինէր մի ազատ կառավարութեան հիմնականների։ Պատճառ, Տրիդենտեան ժողովը հրատարակել է թէ ամուսնութիւնը խորհուրդ եկեղեցու էր, այլև, թէ Եկեղեցին դատապարտումէ ամենայն հերձուածող ուսումն, նա դատապարտումէ նոյնպէս ամենայն պսակ, որ չէ կատարուած ըստ կաթոլիկեան արարողութեան։ Նա տալիս է մինին անունս Հաբիտուէլ (concubinage), միւսին Հերեզիա (hérésie)։ Արդ, դիցուք թէ Տէրութիւնը չէր ընդունում քաղաքական ամուսնութիւնը որպէս կայ Ֆրանսիայում, այնու ամենայնիւ գտանուելու էր նա մի անախորժ յարակցութեան մէջ Եկեղեցու հետ, անհրաժեշտ գործ դնելով այն զգուշութիւնը կրօնական ներողամտութեան, որ ոչ մի ազատամիտ կառավարութիւն կարող չէ մերժել, մանաւանդ մեր տան և իններորդ դարում։ Ի՞նչպէս կարող է Պապը հաստատել դատաստանական վճիռներ, որ եկեղեցին հանդիսաբար հրատարակել է իբրև անզօր և ոչինչ։ Ի՞նչպէս կարող էր նա շնորհել մարդերին իրաւունք ապրելու այնպիսի հաւատական պայմանների մէջ որ իւր բերանով դատապարտած էին իբրև ամբարիշտ, իրաւունք վայելելու արտօնութիւնը անձամբ անձին կատարելու դատաստանական գործողութիւնք, որ ունէին միայն ոյժ և զօրութիւն, երբ որ ներկայ էին դրա կաթոլիկ հռոմէական եկեղեցու քահանայք։ Մի այդպիսի ներողամտութիւն նորա կողմից երևելու էր հակառակախօսութիւն նորա քահանայապետական կարգի նոյն իսկ էութեանը։ Դա լինելու էր մի հրապարակութիւն, թէ յառաջացել է մի կատարեալ փոփոխութիւն պապութեան հոգու մէջ։ Այս պատճառով, ուշադրութեան արժանի է այն իրողութիւնը, որ մեք գտանումենք մի մեծ բազմութիւն ջերմեռանդ կաթոլիկ աստուածաբանների, որ պնդումեն, թէ Եկեղեցին կարող էր բոլորովին թոյլ տալ քաղաքական ամուսնութիւնը, առանց վնասելու կրօնի հիմնական կանոններին։

Մարտի 18 ին, ուր օր յառաջ քան թէ կոմս Կավուրը ասել էր այն ատենական ճառը, որ յիշեցինք վերևում, Պիոս իններորդը ուղղից դէպ ի կաթոլիկեան ժողովուրդը մի խօսք նշանաւոր այն բոլոր հանդիսաւորութեան կնքով, որ սեփական է այնպիսի մեծակշիռ հրատարակութեան, որպիսի պիտի լինէր հրատարակութիւնը Պապի դատապարտութեան Եկեղեցու կացութեան այդպիսի տարակուսելի ժամանակամիջոցի վերայ։ Պիտոյ է մնաբերել, թէ այդ խօսքը էր նորա կողմից մի ազատ և կամ ուղղ բացայայտութիւն իւր կարծիքի, երբ որ նա արդէն քաջ կշռութեամբ էր խորհրդածել էր այն առաջար-

կուԹիւնքը որոց բերողը էր Հայր Պասալիան։ Ա.իս Հանգամանքի մէջ նա իւր պարտականուԹիւն համարեց ժողովել կարդինալները մի առանձին եկեղեցական խորհրդարանում, որ բացայայտէ իւր կարծիքը մի շատ հանդիսաւոր կերպով, ինչպես պահանջումէր Եկեղեցու ծիսակարգը։ Ա.իս ընդհանրական ԹուղԹը շատ երկար է, քան Թէ մեզ կարելի էր բոլորովին յառաջ բերել դորան. սակայն կարծիքները, որ նա բացայայտումէ, ունին այս րոպէիս մի այնպիսի դէպուղիղ և մեծակշիռ խորհուրդ, որ աւելի քան Թէ երկար ուշադիգ մեկնաբանել, նախապատիւ ենք համարում յառաջ բերել աւելի նշանաւոր տեղերից մի քանիսը։

«Հաստ ժամանակ է, մեծարելի եղբարք, որ մեք տեսանումենք Թէ որպիսի ցաւելի պատերազմից ճշմարտուԹեան և մոլորուԹեան, առաքինուԹեան և արատի մէջ, ալեկոծուած է քաղաքական ընկերուԹիւնը. պատճառ, մինները մի կողմից պաշտպանումեն այն բանը, որին հաճոյ էր նոցա ասել նոր ժամանակի աշխարհաշինուԹիւն. դորա հակառակ, միւսերը պատերազմումեն արդարուԹեան և մեր ամենասուրբ կրօնի իրաւունքի համար։ Առաջինքը խնդրումեն, որ հռոմէական քահանայապետը հաշտուի և վերջացնէ իւր վէՃը այն բանի հետ, որին նոքա ասումեն յառաջադիմուԹիւն... Եւ արդ, նոցանից, որ յօգուտ կրօնի խնդրումեն և աղաչումեն մեզ, բարեկամուԹեան ձեռն պարզել դէպ ի նոր ժամանակի քաղաքագործուԹիւնը, հարցնումենք մեք, արդեօք այնպիսի՞ էին գործերը, որ կարող էին Քրիստոսի փոխանորդին երկրի վերայ պատճառ տալ, առանց ծանր վտանգի իւր հոգւի համար և առանց շատ մեծ խայտառակուԹեան բոլորեցուն համար, դաշնաւորուԹիւն հաստատել այժմեան ընկերուԹեան հետ, որոյ գործողուԹիւնը յառաջացուցել է այնքան ԹշուառուԹիւնք, որ կարելի չէր ըստ բաւականին արտասուել, որ և հրապարակել է այնքան շատ առաջնորդական կանոններ, անիծեալ կարծիքներ և մոլորուԹիւնք որ բացարձակ հակառակ են կաԹոլիկեան կրօնի ուսմանը... Ա.իս նորաժամանակեայ քաղաքագործուԹիւնը որ պաշտպանումէ ամենայն աստուածպաշտուԹիւն, որ հակառակ էր կաԹոլիկուԹեանը, որ ոչ Թէ միայն հրապարակական պաշտօնները փակում չէ անհաւատների առաջև, այլև բացումէ նոցա զաւակներին կաԹոլիկեան ուսումնարանների դուռները, մինչ նոյն միջոցին վտդովվումէ այն կարգերից որ դրած են կառավարելու կաԹոլիկեան ուսումնարանքը և բազմաԹիւ եկեղեցականներից ամենայն կարգի... Ա.իս հանգամանքի մէջ կաՐող է հռոմէական քահանայապետը պարզել բարեկամուԹեան ձեռն դէպ ի մի այդպիսի քաղաքագործուԹիւն, նուաստացնել իւր անձը դաշնախօս լինելով և միաւորուելով նորա հետ մի դաշնաւորուԹեան կապով»։

Ընկարելի է ընկնել սիսալանքի մէջ, միտ դնելով այս խօսուածքի խորհրդին և նպատակին։ Ա.իս հրատարակուԹիւնը իւր մտքով նոյնքան պարզ ու բացայայտ է, որքան կամն Կաֆուրի հրատարակուԹիւնը։ Երբ որ Պիոս

*իններորդը ասել էր այս առենական խօսքը, անտարակոյս, պատրաստ էր նա այրել իւր եկեղեցիքը։ Մարտի 18 ի ճառը ցուցանումէր նորա կողմից մի հանդիսաւոր հրաւէր դէպ ի կռիւ և մի անվոխվոխելի հաստատութիւն, որով չկամէր նա յարմարուիլ այն բանի հետ, որին ընդհանրապար ասումեն ֆարանալէ հոֆէ։ Այս րոպէիս անյուսալի է երևում, որ Հռոմի աթոռը ցուցաներ մի հաշտութեան հոգի որ կարող էր վերջ դնել այս թշնամական վէճերին իտալական կառավարութեան հետ։ Երևում, որ ազդեցութիւնքը որ տիրումեն նորան, պիտի յառաջ կոչեն քաղաքապետութեան բոլոր յորդորանքը և բոլոր հրաւէրքը։ Բայց որչափ և զօրաւոր էին այս արգելքը այս րոպէիս, և որչափ հնաոլանդաւոյց էր կաթոլիկեան քահանայապետութեան կարգը, այնու ամենայնիւ մի մեծակայ փոփոխութեան գուշակող նշան ցուցանումէ մեզ այն տհաճութիւնը որ տարածուած է հաւատացեալների զանազան կարգերի մէջ, եկեղեցու մեծաւորի ընտրած ընթացքի մասին։ Եկեղեցական շարժողութիւնը դէպ ի մի ընդհանուր վերանորոգութիւն (րեֆօրմ) ոչ թէ վարդապետութիւնների, այլ եկեղեցու կազմուածքի և կարգի մէջ, հասել է արդէն, թէև առանց աղմուկ գործելու, ահագին չափի և աստիճանի։ Դա պարունակումէ իւր հանախոհների մէջ մարդիկ ամենայն կարգից և ամենայն աստիճանից։ Որ առաւել մեծակշիռն էր այս տեղ, այդ շարժողութեանը օգնական ու ձեռնտու են իւրեանց կրթութեամբ, ջերմեռանդութեամբ և բարեպաշտութեամբ առաւել նշանաւոր անձինք, անձինք որ կաթոլիկութեան բարոյական կեանքի և իմացականութեան փոխանորդք էին։ Այս մարդիկը իւրեանց վկայող սրտի զօրութեանը գիտակից լինելով, կարող չեն հասկանալ թէ ինչո՞ւ հակառակ էր եկեղեցին կաթոլիկեան հաւատի գաղտքը միայնաբար յանձնելու իւր յատուկ կենդանական զօրութեանը։ Այս կայր հաւատը դէպ ի ամրութիւնը իւրեանց հաւատքի, արդեօք հիմնաւո՞ր էր թէ ոչ, դա մի խնդիր է, ամենևին դուրս մեր ճառի նիւթից։ Մեզ հերիք էր ակներև կացուցանել, թէ այդ վկայութիւնքը սրտի պատկանումեն մի մեծ և օրէ օր աճող ու զօրացող բաժնի եկեղեցու մէջ, որ ինչ չափով ընդարձակուած է, նոյն չափով ստանումէ հաւատի ազդեցութիւն և սկսանումէ հրատարակել մի նոր աստիճան վճռահատութեան։ Այս կարգի կաթոլիկների կարծիքը աւ փոքր փոքր տարածվումեն, և նոցա հրատարակութիւններին ընկերակից են գրաւիչ ակնարկութիւններ, որ մեծ կշիռ ունին այն հետևանքի մասին, որ կարող էին յառաջանալ, եթէ պապը կամակորուէր իւր ընթացքի մէջ ընդդէմ խոհեմութեան և արդարութեան։ Բուռս Հերյոֆ (chisme) արդէն դուրս է հանուել բերանից, և դորա գաղափարը ընտելանումէ նոցա որ տեսանումեն եկեղեցու տրտում որպիսութենից յառաջացած խռովութիւնը, տրտում որպիսութենից որոյ պատճառն է պապի յանձն առած ձեռնարկութիւնը, իւր աշխարհական իշխանութիւնը պաշտպանելու համար։ Միա դնելով բոլոր երևոյթներին, եկեղեցու կացութիւնը*

Իտալիայում շատ շուտով ցուցանելու է մեզ մի անօրինակ ամայութիւն պատմութեան մէջ. պատճառ, Պապը հրաժարուելով խոստովանել հողաւոր իշխանի միաւորութիւնը Իտալիայի նոր թագաւորութեան հետ, հրաժարվում նոյնպէս, Վիկտոր Էմմանուէլի հետ միասին հաստատել եպիսկոպոսների վիճակը գաւառների մէջ: Սորանից յառաջանում, որ արդէն շատ, եպիսկոպոսական աթոռներ դատարկ են. եթէ երկարատև լինի այս կացութիւնը գործերի, մեք կարող ենք գուշակել, որ կը տեսանենք Իտալիան իւր եպիսկոպոս հովիւներից զրկուած, և այս, այն պատճառով, որ Եկեղեցու մեծաւորը չկամի հրաժարուիլ իւր աշխարհական իշխանութեան իրաւունքից: Ահա մի ցաւելի և ծանր մտածութիւն է, որ շատ ձեռնտու էր վերդովելու երկիւղած հոգիքը որ սիրում են Եկեղեցին և երկիւղի մէջ են, մի գուցէ նա օտարացներ իւրեանից ժողովրդի սէրը և սիրտերը: Ահա յառաջադիմութիւնքը որ այս կարգի մարդիկը արել են այս հանգամանքի աղճատութեան տակ, կարելի է դատել մի նամակի ոճից, որ հասուցած են Պապին, որ և հրապարակուած է մակագրութեամբ la Questione italiana (իտալիական խնդիրը). դորան ընծայում են մի բարձրապատիւ եկեղեցական կարգաւորի, որ հնչակաւոր էր թէ իւր բարեպաշտութեամբ և թէ իւր գիտութեամբ: Տեսանելով նմանապիսի քաջալերութիւնք, մի քաղաքական փոփոխութեան ջատագովութիւն, որ ուղղել էր դէպ ի Պապը մի մատենագիր, խորին յարգութեամբ և անկեղծ անձնանուիրութեամբ սիրող Եկեղեցին, պլէ բաց ի դորանից լսելով, որ նա է յայտարարը ոչ թէ միայն իւր անձնական սրտի վկայութեան, պլէ իւր կրօնակիցների մի պատուելի և շատ լուսաւոր մասնին, կարող ենք դադար առնուլ և հարցանել մեզանից, արդեօք չէինք տեսանում այս տեղ ապացուցութիւն մի կարծիքի որ էապէս նոր է, որ և մինչև այժմ հրատարակել չէր կաթոլիկեան եկեղեցին: Ուշադրութեան արժանի է այդ, որովհետև գուցէ ցուցանում դա գործական սկզբնամասունքը մի մեծ յեղափոխութեան եկեղեցական կարգի և կազմակերպութեան մէջ: Թէ այսպէս, թէ այլպէս, մեք կարող չենք չհամարել մի շատ ու շատ մտատութեան արժանի հանգամանք (թէ յառաջանային դորանից անմիջական հետևանք, և թէ ոչ), որ սուրբ աթոռը այն տեղ է հասուցել գործը, մինչև պիտի տեսանի ուղղած իւր վերայ, հաւանութեամբ ջերմեռանդ կաթոլիկների, մի ղգուշացուցիչ ազդարարութիւն, այնպիսի հանդիսաւոր ոճով, որպիսի տեսանում ահա այս խօսքերիս մէջ.

«Եթէ Պապը հաստատ կը մնայ իւր անշարժելի և անփոփոխելի մերժողութեան վերայ, միշտ ասելով ու կրկնելով իւր բացարձակ և անդառնալի խօսքը «կարող չեմ» non possum, այնուհետև մի ահաւոր երկիւղ կայ, մի գուցէ Իտալիան կարգաւորէ իւր գործը և առանց Պապի մնանակցութեան, այո՛ և ընդդէմ Պապի օգտին. մի գուցէ եկեղեցին և տէրութիւնը հրապարակաւ պատերազմ մտանեն միմեանց միւսի ընդդէմ. մի գուցէ կրօնական վար-

*դապետութիւնքը մերժուին և դատապարտուին իբրև անվիաբանելի բաներ ազատութեան և միաւորուած Իտալիայի հետ. մի գուցե հոգևոր դասը բաժանուի երկու պատերազմական բանակ, և հուսկ յետոյ կախուի մեր գլխի վերայ թշուառութիւններից ամենամեծը — մի աղգային հերձուած»:*

*Նրեք ճշմարիտ է, թէ այժմեան պապի թագաւորութիւնը մօտեցել է իւր վախճանին, նորա յաջորդի ընտրութիւնը կը լինի հռոմէական եկեղեցու պատմութեան առաւել դժուարին և տարակուսելի ժամանակներից մինը. պատճառ, նորա յաջորդը կոչուած կը լինի վճռելու այս մեծակշիռ հնդիրները:*

*(Edinbourgh Review.)*

(Էդինբուրգեան ազգհայեաց օրագիր.)

Ս. Նալբեանց:

ՎԵՐՋ.

## ԹԷ ԻՆՉ ԲԱՆ ԾԱՆՐ ԷՐ ՈՒՍԱՆՈՒԻՄ ՍԱՐԴՍ·

*Հ՚ուտով, իմ ընթերցող, վերահասու կը լինիս դու, թէ ինչ բաներ համարումէի ես ծանր ուսանելի։ Մի քանիքը դոցանից են իրողութիւնք, միւսերը բարոյական ճշմարտութիւնք, պլ միւսերը գործական խրատք, բայց բոլորը պիտի ուսանուի, բոլորը լցուցանուի գործով — գժուարութիւն-ների մէջ։ Ինքն ըստ ինքեան դոքա ամենևին գժուար հասկանալի չեն և ոչ իսկ այնպիսի հիմքերի վերայ հաստատուած, որ չէին իսկոյն լուսափայլ և ակներև։ Ո՛չ. այն բաները որ կային մոքում, են մանաւանդ շատ պարզ, այո՛ ըստ մեծի մասին անվիճելի։ Ուսանելու գժուարութիւնը ըստ մեծի մասին յառաջանումէ այն տեղից, որ միտքը այսպէս է խօսում և սիրտը ամե-նևին պլապէս։ Մէք ճանաչումենք ամենևին պայծառապէս թէ ի՛նչ պէտք էր մեզ մոածել և գործել, բայց զգումենք մի անընդդիմանալի ձգտողութիւն դոքա ներհակը մոածելու և գործելու։ Այդ բաներից երեքի կամ չորսի վե-րայ թոյղ մի փոքր խօսենք, որովհետև դոքա պլխաւորքն են այն անթիւ բա-ների բազմութեան մէջ, որ մէք ուսանումենք ծանր։*

*Արդարև մի ճշմարտութիւն է, թէ կան բաներ որ ծանր են ուսան-ւում։ Տառերը մի լեզուի և կարդալը պատկանումեն դոցա կարգին, ինչպէս բազմապատկութեան աղիւսակը, որ յայտնի է ամենեցուն իւրեանց յատուկ դառն փորձից։ Մի քանի տարի յառաջ մի պարահաղութեան հռչակաւոր ուսուցիչ յանձն առաւ իմ աշակերտակիցներից մի որոշեալ բազմութեան ուսուցանել թևթև և վայելուչ կրողութիւն մարմնի, բայց շատ սակաւք մե-զանից ստացել են դորան։ Ինձ յայտնի են մարդիկ, որ շատ տարիք վար-ժել են իւրեանց անձը, առանց պատրաստութեան խօսելու առնի մէջ, բայց երբեք ստացել չէին որ և իցէ վարժութիւն, և ոչ անգամ՝ որ և իցէ միջակ աջողակութիւն, եթէ կամէինք դատել միտ պնելով այն յողդողդու-թիւնը որ իսկոյն սկզբումն երևումէ նորա մէջ։ — Հայերի մասին ոչինչ չկայ ասելու. նորա ոչ վարժվումեն խօսելու արուեստի մէջ և ոչ իսկ խօսել գի-տեն. գուցէ հարկաւոր չէր այդ և նոցա կացութեան մէջ։ Այս հարևանցի,*

Մանկք շատ դժուար և ծանր ուսանումն գիտել, թէ նոքա չէին սրտամիտ և կարող չէին պատմել ոչինչ զըսյց. միւսերը իւրեանց երկար ու ձիգ կեանքի մէջ երբէք կարողացել չէն ուսանել այդ։

Այլց միւս կողմից կան բաներ, որ անչափ շատ հեշտ ուսանումն մարդիկ, այո՛ և անասուններ։ Մի շուն, որ միարած բանի համար ծեծ էր կրել, միւսանգամ պարտաւոր կացուցանում չէ իւր անձը դորա մէջ։ Եթէ մի ձի ուր և իցէ լաւ կերակուր է ստացել, և դարձեալ, ճանապարհից հասել էր այն տեղ, անպատճառ կամէր իջևանել այն տեղ։

Ծանր ուսանելի բաներ ասելով, երբէք հասկանում չեմ այնպիսիները, որ ըստ իւրեանց էութեան կարօտ են շատ ժամանակի, զըր օրինակ յոռնոյն լեզուն։ Բայց երբ որ դորան ուսել էր մի մարդ, ապա գիտէր և հասկանումէր դորան, և երբէք մտաբերում չէր, երկբայել ճշմարտութեան վրայ, կամ թէ ցանկանալ, որ քերականութեան մի կանոնը այլապէս սահմանէր այս կամ այն բանը։ Ոչ, ես հասկանումեմ այնպիսի բաներ որ ծանր և դժուար ուսանելի են, որովհետև դժուար է խոստովանել և ճշմարիտ համարել դորանց. ես հասկանումեմ այնպիսի բաներ, որ շատ հեշտ խոստովանելի էր ճշմարիտ, բայց դոքա — կարծումն մարդիկ — թէ պիտի կերպարանափոխ առնէին բոլոր աշխարհը, որոյ մէջ ապրումն նոքա. ես հասկանումեմ այնպիսի բաներ որ թէև մարդիկ խոստովանումեն ճշմարիտ, բայց դորանց իւրեանց բոլոր կեանքի մէջ սուտ էին համարել, որ և միշտ կը համենային սուտ համարել. ես հասկանումեմ այնպիսի բաներ, որ վերջ ի վերջոյ, դժուարութեամբ ճանաչել էին իրրև ճշմարիտ, և մտքում դրել էին ապրել հետևելով դոցա, այնու ամենայնիւ ամեն օր մեղանչումեն կամ թէ կը համենային մեղանչել դոցա ընդդէմ։ Այն բանը որ դժուար ներս էր մտել մտքի մէջ, գրումեն իւր յիշողութեան մէջ, բայց ամենայն օր մի հաճոյական ձևուն անցանումէ դորա վերայից, այնպէս որ գրածը նսեմանումէ և վերջապէս ամենևին չքանումէ։ Այո՛, դորանով հերիքանում չէ հաճոյական ձևը. նա սկսանումէ նախ և յառաջ գրել այն տեղ ամենևին թեթև նշանագիծեր, որ ունին դէպուղիղ ներհակ խորհուրդ, որ և օրէ օր, շաբաթէ շաբաթ աւելի որոշ և պայծառ կերպարանք են ստանում, մինչև մի ամսից կամ մի տարուց յետոյ, յիշողութեան տախտակի վերայ երևումէր ամենևին ներհակը այն բանի, ինչ որ սկզբումը գրած էր նորա վերայ։ Ահա այսպիսի բաներ համարումեմ նոցա կարդում, որ ծանր ուսանելի են. բաներ որ սկզբումը ակամայ ուսանումեն մարդիկ. բաներ, որ եթէ մարդիկ միանգամ ուսել են, մոռանումեն առ սակաւ սակաւ, մինչև դարձեալ յետ են դառնում դէպ ի իւրեանց առաջին հայեացքը։

Այդպիսի բաները ի հարկէ դրած են այն սահմանի մէջ, որին մտենում ախտի և կանխամուտ մոլորութեան ազդեցութիւնը։ Նորանց ընդունելու միջոցին գործակից են միտքը և սիրտը։ Դու վկայութեամբ հաստա-

մէր միևի առաջև, թէ երկու անգամ երկուն չորս է, և նա երբէք երկրա-
յելու չէր դորա վերայ, բայց դու ցոյց տուր մի տղամարդի, որ նա չունի եր-
բէք այն մեծութեան կշիռը — ինչպէս մինչև այժմ կարծել է, ցոյց տուր մի
կնոջ, որ նորա զաւակները ամենևին այնպէս են, ինչպէս միւս մարդերի զա-
ւակները, այնուհետև դժուար կը լինի այդ անձնին հաւատացնել, և շու-
տով կը յայտնուի, որ այդ անձը այն անախորժելի ստուգութիւնը, որ ստի-
պանքով յանձն էր առել, դարձեալ բայ է ձգել իւրեանից։

Մի բան, որ մարդերի առաւել մեծ մասը ծանր է ուսանում, է. որ
նոքա հասկանային թէ մի ամենևին փոքր շրջանից դուրս չունէին ոչինչ կշիռ
և թէ յիրաւի ոչ ոք նոցա վերայ ոչ մտածումէ և ոչ խօսումէ։ Գրեթէ ա-
մեն մի հասարակ մարդ (թէ այր և թէ կին) ունի մի պղտոր, բայց ամուր ար-
մատացած հաւատ, թէ նա ամենևին զանազան էր միւս մարդերից և այդ
պատճառով ահա աւելի լաւ և գերազանց նոցանից։ Կարելի է, որ նա կար-
ծումէր լինել այդպիսի, մի կողմից միայն. բայց դա բաւական է բոլորովին։
Եթէ մի վաճառական մի փոքրիկ քաղաքում ունի հարիւր գնողք, ապա գո-
յցանից ամեն մինը անտարակոյս հաւատացած է, թէ վաճառականը տալիս
է նորան շահաչատութիւնք, որոյից զուրկ էին մնացած իննսուն և իններ։
«Ասա միայն թէ դու գնումես այս ինչ, կամ այն ինչ տիկնոջ համար, ա-
սումէ դա իւր աղախնուն, եթէ դա պիտի շաքար կամ մի այլ բան լերկր
վաճառական խանութից, և այդ տիկինը ոչ մի րոպէ երկբայում չէ որ նա
ստանումէր աւելի լաւ շաքար և աւելի արժան գնով։ Վաճառականը որին
անծանօթ չէ այս տկարամտութիւնը իւր գնողների, ջանադիր է կերակուր
տալ դորան։ «Բոլոր միւսերը պիտի ղահվէի համար տան այսքան և այնքան.
բայց ձեզ տալիս եմ այս ինչ և այն ինչ գնով»։

Մի՞ թ դնելով մեր յատուկ նկատողութեանը, պիտի ասեմ, թէ յատ-
կապէս մանրավաճառները մեծ շահ ունին մարդկային հոգու այն որպիսու-
թիւնից որով մարդերի առաւել մեծ մասին շատ դառն էր երևումմտածել,
թէ նոքա դէպուղիղ այնպէս էին, որպէս միւսերը, և ոչինչ բանով նոցա-
նից զանազան։ Տիկին Վ. տհաճութեամբ բարկանալու էր, եթէ մի մարդ
ասէր նորան, թէ վաճառականը վարվումէ նորա հետ ամենևին այնպէս,
ինչպէս նորա երկու Ե. և Ն. դրացիների հետ։ Նա ևս առաւել բարկանա-
լու էր, եթէ մի մարդ հարցանէր նորանից, թէ ի՞նչ պատճառով պիտի նա այլ
և աւելի լաւ ուշադրութիւն գտանէր վաճառականից, քան թէ իւր դրացի
տիկինները։ Նա հաւատի և աներկբայելի է համարում, թէ ինքը ամենե-
ւին այլապէս և շատ աւելի լաւ էր քան թէ նորա։ Մարդիկ առհասարակ
կամենում չեն հաւասար լինել միւսերին, յատկապէս նոցա, որոց կարդին
այնու ամենայնիւ պատկանումեն։ Մի սովորական երկրաչափի ցաւելի է,
որ նա չէր համարվում մի ամենևին անսովոր բան, և ամենեքեան շատ ծանր
ուսանումեն հասկանալ, որ ինքեանք այնպէս էին, ինչպէս միւսերը։ Ի՛նչքան

յաճախ լսումենք այն խնդիրը, երբ որ մի մարդ պիտի յանձն առնուր մի բան որին յօժար չէր, «Արեցէք այդ ի սէր Ք՛, Ք՛ կամքս կատարելու համար»։ Բայց թէ ինչո՞ւ անպատճառ ։ համար «լինելու էր դորա լոգիկական պատասխանը։ Բայց այս պատասխանը լինելու էր ամենևին անհասկանալի, ո՞րովհետև ե՞ւ թէև շատ ընչին և աննշան բոլոր միւսերի համար, ամեն մարդու համար և միջնակէտը բոլոր աշխարհի։

Ա՛յս սխալ ու մոլար կարծիքից, որպէս թէ մեք գանազան էինք բոլոր միւս մարդերից, բղխումէ երևակայութիւնը շատերի մէջ, որպէս թէ նոքա միւսերի մտածութեան մէջ աւելի տեղ էին բռնում, քան թէ ստոյգ էր։ Մարդերի մեծ մասը մտածումէ միայն իւր անձի և իւր գործերի վերայ։ Մինչև անգամ այն բանը, որոյ վերայ խօսումէ ամենայն մարդ» խօսակցութեան նիւթ է օրի մի տոքրիկ միջոցում։ Եւ այն տղամարդը «որ ամենեցուն բնրանում է», է հաղիւ թէ մի քանի րոպէ ամեն միտի բերանում առանձնապէս։ Այլև «երբ որ նորան բերան են առնում» այդ բանը լինում շատ կիսատբրատութեամբ, համեմատելով այն մեծակշռութեանը որ ընծայումն իւրեանց։ Ինչ բան իւրեանց ձեռնով է լինում, համարումն նոքա շատ դժուարին,— բայց ամենևին աննշան և անխտիր, եթէ դա լինումէր օտարի ձեռնով։

Մի այլ բան նոյնպէս ծանր ուսանելի է, ոմանց մէջ նոցա բոլոր երկարատև կեանքում մնումէ անուսանելի։ Ինչքան շատ մարդերի հանդիպումենք միտքդում, որ աներկբայ են, թէ ամենայն մարդ նայում նոցա վերայ։ Եւ որովհետև այս կարծիքի մէջ են, միշտ և հանապազ մտածումեն իւրեանց անձի և իւրեանց մեծակշռութեան վերայ և—այդ բանին հետ էր տեղեկանալ։ Նոքա իւրեանց անձը ծիծաղելի են կացուցանում, բայց ցուցանումեն, որպէս թէ արժանի էին ընդհանուր մեծարանքի։ Միանգամ էդինբուրգում ներս մտաւ թէատրոնի մէջ մի մարդ, Վալտեր Սկոտի հետ մի և նոյն րոպէում։ Բազմականքը բարձրաձայն ողջունեցին ականաւոր մտեւնագիրը, որ հանդարտութեամբ գնաց դէպ ի իւր տեղը, որպէս թէ այդ մեծարանքը չէր պատկանում նորան, մինչ այն միւսը (նորա հետ ներս մտաւնողը) յառաջ թեքուեցաւ իւր նստարանի ցանկից և շնորհակալութեամբ խոնարհեցրեց գլուխը։

Մի չափազանց անձնագիտակցութիւն, միշտ անախորժ կերպով և գանազան տեսակ յայտնվումէ. բայց աւելի անախորժ կերպով, երբ որ մի մարդ կեղծաւորութեամբ փախչումէ նորանից, որին սովորաբար ասումենք ինքնահաւնութիւն։ Կարելի է հաստատապէս ասել, որ այն մարդը որ առանց ստիպանքի և պարզաբար խօսումէ իւր մասին առաջին դէմքով. «Ես մտածումեմ այսպէս և այնպէս. Ես տեսել եմ, և այն և այն», աւելի սակաւ պաշարուած էր ինքը իւրեանով, քան թէ նա, որ միշտ և ամ ու դողով ջանադիր էր փախչել ե՞ւ ասելուց։ Ամեն մի պատ ի պատ երկարաբանութիւն այս ես խօսքիս, անհերքելի վկայումէ, որ մարդը մտածումէր իւր վերայ,

մինչ նա, որ պարզմտութեամբ գործ է գնում Եսը, ամենևին մտածում չէ իւր վերայ, և միայն բացայայտում է իւր միտքը այդպէս, որովհետև այդ էր ամենակարճ և ամենապարզ ճանապարհը։

Ունայնասիրութիւրը և հպարտ անձնազգացութիւնը բացայայտվում է ինչ ինչ մարդերի մէջ նոյնպէս որոշակի նոցա ձեռագրի մէջ։ Դա շատերի մէջ — դէպուղեղ կեղծաւոր է, նոցա անուան ստորագրութիւնը յատկապէս։ Եթէ կամէինք ճանաչել, արդեօք որ և իցէ մարդ ունայնասէր էր, թէ ոչ, ապա պիտոյ էր միայն խնդրել նորանից, որ իւր անունը գրէր իւր պատկերի տակ։ Ոմանք աշխատում են գրել որպէս թէ մեծատնաբար. միւսերը ընծայում են մի յիմար արժանաւորութիւն աւելորդ պաճուճանքի։ Բոլորիքեան սոքա հասել էին լոկ այն աստիճանին, որ հպարտանում էին այն աջողակութեամբ, որով կարող էին ձեռքում խաղացնել գրիչը։ Ոմանք որոնում են մի կեղծաւոր պարզ, կամ ուսումնականի պէս երևեցած ձեռագիր, միւսերը մի համարձակ և պատերազմնական ձեռագիր։

Ա՛յրջ ու ծայր գտանելու չէինք, եթէ կամենայինք որոնել ու գտանել այն բոլոր վանատան տեսակները որով մարդիկ յուցանում են, որ նոքա դեռ ևս ուսած չէին հասկանալ իւրեանց յատուկ աննշանութիւնը։ Միևնոյն ընթերցող, երբէք դադարել չէիր դու փողոցումը, որ խօսէիր մի հին ընկերացած տղամարդի հետ։ Եթէ դու պատահած էիր մի այդպիսի մարդու, անտարակոյս նկատած կը լինիս մի խորթ տեսարան։ Ծեր պարոնը, որ միւս բաների մէջ շատ խելացի է, մի առաջարկութիւն իւր խօսակցութեան, որ սկսել էր ամենևին բանական կերպով, վերջացրից անկապ և անմիտ խօսքերով։ Դու երեսդ թեքել էիր դէպ ի մի այլ կողմ, բայց յանկարծ վախեցած նայումես այդ մարդու երեսին, որ տեսանես, թէ ինչ էր այդպէս անակընկալ պատահել նորան։ Եւ ահա նկատումես դու, որ նորա աչքը ուղղած են մի անցաւոր մարդու վերայ, գուցէ մի մանկամարդ կնոջ վերայ, որ բաւական հեռի էր, բայց դիպուածով շրջից երեսը և յետ նայեց։ Ծեր պարոնը մըտածումէ, թէ այդ կինը նայել էր նորա, նորա վերայ միայն։

Ունայն անձնամոլութիւնը երևումէ այլ ևս շատ անձնների, յատկապէս պառաւ կանանց մէջ, այն բանով, որ նոքա միշտ բացայայտումեն իւրեանց կարծիքը, թէև ոչ ոք չկամէր լսել նոցա, և այնպիսի բաների վերայ, որոց ամենևին անտեղեակ են ինքեանք։

Սակայն պիտոյ չէ մտածել, որպէս թէ այն մարդիկը որ իւրեանց անձը մեծակշռու էին համարում, միշտ երջանիկ են իւրեանց մեծամտութեան մէջ։ Մեր ընթերցողներին անպատճառ պատահած կը լինին այնպիսի մարդիկ, որ միւս բաների մէջ խելացի են, բայց միշտ երևակայումեն, թէ բոլոր դրացիքը մի տեսակ չար միաբանութիւն էին կազմել ընդդէմ նոցա, որ և տեսանելով երկու մարդ խօսակից միմեանց հետ, իսկոյն կարծումեն հաստա-

տապէս, որպէս թէ խօսքը իւրեանց վերայ էր, մինչ ոչ ոք մտաբերել ևս չէր մի բան նոցա մասին։

Մի պղ բան նոյնպէս ծանր ուսանելի է, այսինքն, որ մեք ոչինչ հիմք կամ ոչինչ իրաւունք չունինք բարկանալու նոցա վերայ, եթէ նոքա չնչին կարծիք ունին մեր վերայ։ Այս մի ճշմարտութիւն է, որ շատերը դժուարանումն հասկանալ։ Մարդերի մեծ մասը բարկանումն կամ թէ տհաճ-վումն, տեղեկանալով թէ սա կամ նա ասել էր, որ նոցա ընդունակութիւնը կամ աջողակութիւնը մի բանի մէջ մեծ չէր։ Այս՝ բոլոր մտաենագիրները տհաճութեամբ ընդունումն իւրեանց գրուածների վերայ ստգտանող բանախօսութիւնքը։

Ուղիղ անկիրթ մարդիկ ուսանումն ծանր և դժուար, թէ նոքա չունին ոչինչ իրաւունք գանգատելու, եթէ տեղիք կար նոցա յետադաս լինելու աւելի բարձրապատիւ և նշանաւոր մարդերի, և թէ նոցա հետ վարվումն աւելի չնչին ուշադրութեամբ, քան թէ վարուելու էին, եթէ նոքա ունեցային յարգ և կշիռ։

Ս. Նալբեանդ.

1. Հիւսիսափայլ օրագիրը ամիս ամիս դուրս գալով, պարունակելու է իւր մէջ ճառեր ընդհանուր Երկրագիտութեան, ընդհանուր Պատմութեան և Աշխարհագրութեան, այլև մանաւորապէս Հայրենական պատմութեան և աշխարհագիտութեան վերայ:

2. Ռնագիտական ճառեր, այսինքն բնութեան օրէնքների և դոյզա գործադրութեան վերայ մարդուս օգտի համար, ճառեր զանազան ֆիզիկական յայտնագործութիւններին, հասարակաւոս Ատեղաբաշխութեան քիմիայի, Հանքաբանութեան և Ֆիզիօլօգիայի վերայ. այլև բանախոսութիւն տունկերի, գիտութեան արժանի լոյսերի, նոցա տնկարկութեան և օգտի վերայ, վերջապէս կենցաղօգուտ դիւտերի և յայտնագործութիւնների մասին:

3. Խարոյական, գեղեցիկ բանասիրական ճառեր, առաւել ընտիր մտածութիւնք և զգացողութիւնք թէ ոտանաւոր և թէ արձակ ոճով. թարգմանութիւնք հին հայկական, և հին ու նոր եւրոպական մատենագրութեանց. այլև Կրիտիկայք (ուսումնական քննութիւնք) նորատիպ հայերէն գրուածների վերայ:

Ձանկացողքը ստանալ այս օրագիրը կարող են հասուցանել իւրեանց խնդիրը կամ ուղղակի հրատարակողին Մոսկվայի մէջ այսպէս. Въ Редакцію Армянскаго Журнала «*Съверное Сіяніе*», въ Москвѣ, на Черногрязкѣ, въ домѣ Статскаго Совѣтника С. Назарьянца. կամ թէ Մոսկվայի նամակատանը այսպիսի հասցեով. Въ Газетную Экспедицію Московскаго Почтамта.

Տարեկան 12 տետրակների գինը է 8 մանէթ Մոսկվայի մէջ, լայց ուրիշ քաղաքների համար $9\frac{1}{2}$ մանէթ:

---

Одобрено Цензурою въ С.-Петербургѣ, 20 Августа 1862 года.